Ինչպես մեզ, այնպես էլ ժամանակին Կոմիտասին հետաքրքրել է «գեղջկական երգի անխառը ոճով» ավետիսների երկրորդ խումբը, որը կապված է ժողովրդական երգաստեղծության առավել հին՝ արխաիկ շերտերի հետ:

Ներկա ուսումնասիրության համար առավել հետաքրքրական են ժողովրդական ավետիսների միջին՝ կենտրոնական մասերը՝ խնկի ծառը բերելը և տաճարի կառուցման հատվածները, որոնք ավետիսների առավել հին շերտն են կազմում և տանում են մեզ դեպի Հին Շումեր՝ մարդկության առաջին գրավոր սեպագիր հուշարձանները (մ.թ.ա. III հազարամյակ), դեպի Գիլգամեշի մասին էպոսը և «Էն-Մերքարն ու Արատտայի գերագույն քուրմը» էպիկական պոեմը:

Մեր վերլուծական աշխատանքների արդյունքում մի շարք անվիճելի փաստարկներ են առաջ գալիս՝ ապացուցելու այն, որ շումերական էպիկական ավանդազրույցները ոչ թե փոխառնման սկզբունքով են թափանցել հայկական ժողովրդական ավետիսների մեջ և հետագայում «վերածվել» Քրիստոսի Ծննդյան երգերի, այլ այդ զրույցներն ի սկզբանե **էնդեմիկ ծագում են ունեցել** և ժողովրդական բանավոր գրականության մեջ արդեն իսկ ճանաչված ու սիրված են եղել:

**Բանայի բաներ** – Կոմիտաս, Ծննդյան երգեր, ժողովրդական ավետիսներ, խնկի ծառ, Կենաց ծառ՝ մայրի, Ուրուկ և Ուրֆա-Եղեսիա քաղաքներ, Եփրատ, Գիլգամեշ և Էնկիդու, Արատտա և Շումեր, լաջվարդ, Արարատ և Մասիս, Հայոց աշխարհ և Միջագետք, Էն-Մարքար և Էնսուիքեշդաննա տիրակալներ:

Ժողովրդական երգաստեղծության առավել հին շերտն են կազմում ծիսական երգերը, ուստի մեծ արժեք ու հետաքրքրություն են ներկայացնում ուսումնասիրողների համար: Ծիսական երգերի շարքում են դասվում նաև «Ավետիս»-ները, կամ ինչպես անվանում են՝ «Ծննդյան երգեր»-ը: «Աւետ»՝ «ուրայի լուր», «բարի լուր» արմատից են սերված «ավետիս», «ավետարան» բառերը<sup>1</sup>: Մասնագետները զուգահեռներ են անցկացնում նաև «հավատ», «հավետ»,

---

\* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, tigranyan.marianna@mail.ru, հոդվածի ընդունման օրը՝ 11.02.2019, գրախոսման օրը՝ 28.03.2019:

<sup>1</sup> Յեղակից են սանսկրիտի **vidati** «խոսի», հին պարսկերենի **a-void-ya** «ծանուցում», իրաներենի **awyatti-awyata** «հիշողություն, հիշատակ», **Avesta** «հավատք» ևն բառերը (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան (այսուհետ՝ ՀԱԲ), Երևան, 1971, հ. 1, էջ 358-359):

«հավերժ» բառերի հետ՝ նկատի ունենալով «հալ»՝ բնիկ հայկական արմատի բացառիկ նշանակությունը<sup>2</sup>:

Ավետիսներ երգել են Սուրբ Ծննդյան տոնի նախորդող երեկոյան, հիմնականում տղա երեխաները<sup>3</sup> տնետուն շրջելով, գովելով և օրհնելով ընտանիքի անդամներին: Գյուղի յուրաքանչյուր տան դռան կամ երդիկի առաջ խմբվելով՝ երիտասարդներն ավետիս կանչելը սկսում էին Քրիստոսի ծննդյան փառաբանումով: Որպես կանոն երգողները ճշտում էին տվյալ ընտանիքի ամենափոքրիկ ժառանգի անունը, ապա գովերգում և լավագույն ցանկություններ մաղթում նրան: Երգողները պարզևատրվում էին աչքալուսանքով. տան տիկինը մատուցում էր նրանց չոր մրգեր, քաղցրավենիք և սննդամթերք:

Որոշ շրջաններում Սուրբ Ծնունդն ավետող երգերը կոչվել են Կաղանդներ՝ «Կալանդոս, Գալանտոս»<sup>4</sup>. անվան ծագումնաբանությունն անշուշտ կապվում է լատիներեն *calendae*՝ «օրացույց» բառի հետ<sup>5</sup>:

Կոմիտասն իր «Հայոց եկեղեցական եղանակները» հոդվածում գրում է. «Աւետիսների նիւթն առնուած է Ս. Աւետարանից՝ հրեշտակների հովիւներին Մանուկ Յիսուսի ծնունդն աւետելու ըրպէն»<sup>6</sup>: Կոմիտասի ավետիսների սահմանումը բխում է եկեղեցական ավետիսների մասին եղած պատկերացումներից, սակայն նույն տեղում վարդապետը նշում է, որ մինչև մեսրոպյան գրերի գյուտը, սաղմոսերգությունը, ինչպես և եկեղեցական հին եղանակների կարգավորությունը կատարվել է ժողովրդական հին եղանակներով<sup>7</sup>: Որպես օրինակ Կոմիտասը բերում է Ռշտունյաց<sup>8</sup> Պողոնիս<sup>9</sup> գյուղի Ավետիսը,

<sup>2</sup> Հայոց լեզվում այդ հնագույն արմատը բազմակի նշանակություն ունի. հալ՝ «պապ, հօր հայրը, նախնիք, նախահայր», «ծայր, սկիզբ, սկզբնաւորութիւն», «թռչուն, հաւք» (տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, Երևան, 1977, հ. 3, էջ 65-67):

<sup>3</sup> Որոշ շրջաններում ավետիսներ կանչել են նաև աղջիկ երեխաները: Վկայություններ կան մեծահասակների, նորահարսների, ինչպես և հոգևորականների՝ ավետիս ասելու մասին (տե՛ս **Քաջբերունի**, Տօներ // «Ազգագրական Հանդէս» (այսուհետ՝ ԱՀ), Թիֆլիս, 1901, գ. VII-VIII, էջ 114):

<sup>4</sup> Տե՛ս **Շահազիզ Եր.**, Նոր Նախիջեանը և նոր նախիջեանցիք // ԱՀ, Թիֆլիս, 1902, գ. IX, էջ 5-9:

<sup>5</sup> Հայկական ժողովրդական ավետիսների հետ զուգահեռներ կարելի է գտնել սլավոնացիների և եվրոպացիների մշակույթում. ոռու – коляда, ոռումին. – colida, չեխ. – սլով. – koleda, լեհ. – kolęda, սերբ. – kolenda, ալբ. – kolëndë, բուլղ. – колада, ֆրանս. – charandes ևն:

<sup>6</sup> Տե՛ս «Արարատ», Վաղարշապատ, 1894, N 7 (է յուլիս), էջ 222-223:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 224:

<sup>8</sup> Ռշտունիք՝ գավառ Մեծ Հայքի Վասպուրական աշխարհում, որն ընդգրկում էր Վանա լճի առափնյա շրջանները, ինչպես նաև Աղթամար կղզին: Անվան ծագումը կապում են Ուրաշտու (Ուրարտու) և Ռիշուանի երկրանունների հետ, որոնք հիշատակված են ասորեստանյան, ուրարտական սեպագիր արձանագրություններում (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետ՝ ՀՀՇՏԲ), Երևան, 1998, հ. 4, էջ 447):

<sup>9</sup> Բողոնիս [Բողանիս], Պողոնիս՝ գյուղ Արմ. Հայաստանում, Վանի Գավառ գավառակում: Եղել է գրչության կենտրոն:

որը նա ձայնագրել էր Գևորգ վարդապետի եղբայր, նույն գյուղի բնակիչ Հարությունից:

**ԱՐԴ ԳՆԾԱԳԵՔ<sup>10</sup>**  
(Ռշտունիք, գ. Պողոնիս)

[Չափավոր - միջակ]  
[Allegretto sostenuto]

Արդ ցըն - ծա - ցեք, ու - րա - խա - ցեք, Յա - լն - լու: լն - լու:  
Այ - սոր ծը - նունդ ի Մա - րիա - մա, Յա - լն - լու:

Արդ ցնծացեք, ուրախացեք, Յալելյու,  
Այսօր ծնունդք ի Մարիամա, Յալելյու:  
Մարիամ գնաց դուռն ի հետին,

Քամակ ետու խաչափետին,  
Շնչեց, եթի Հիսուս որդին:  
Հիսուս որդին մկրտեցին,  
Բուրդ խանձարուր փաթըթեցին:  
Էրնեկ ա քեզ, սուրբ Հովհաննես,  
Քեզ Քրիստոսին քավոր արին:  
Էրնեկ ա քեզ, գետ Հորդանես,  
Քրիստոս մեջ քեզ մկրտեցին:  
Էրնեկ ա քեզ, բուրդ խանձարուր,  
Քրիստոս մեջ քեզ փաթըթեցին:

Էս տան շինած աշնան շինած,  
Էս տան քարեր մարմար բերած,  
Թոներ ինի (մեջ) քընձ (քանց)  
հ'եկեղցի,  
Հարսներ ինի քընձ եղվնիք.  
Ավելը ձեռ՝ փունջ մանուշակ,  
Կտխեն (բաժակ) զձեռ՝ նուան գինին:  
Մամիկ, մամիկ, ես քե ծառա,  
Սուլեր ոտներ/դ/ կճովա,  
Կոքեով (ընկույզ) էթի՝ կխոխա.  
Ձեր տղի անուն ինչ ի. (Ներսես).  
Ներսես նստի ծառի տակին,  
Բրչամ (ծամ) թալե ծառի ճղին,  
Քանի ծառինճող կա,  
Ձեր Ներսեսին շատ արև կա:

Կարծում ենք, որ այս օրինակը Կոմիտասի առաջին «Ավետիս»-ի գրառումն է (Վաղարշապատ, 1890-ականների սկիզբ): Այս, ինչպես և հաջորդ երկու Ավետիսների<sup>11</sup> մեղեդիները ժողովրդականի մեջ թափանցել են եկեղեցական երաժշտությունից<sup>12</sup>:

Կոմիտասը նշում է. «Այժմ ևս կան անթիւ, անհամար Աւետիսներ, որոնք զանազան տեղեր, այլ կերպ և այլ եղանակներով են երգվում, բայց ընդհանրապէս խօսքերի բովանդակութիւնը միևնոյն է, զանազանութիւնը բարբառի մէջ է...»<sup>13</sup>:

Ավելացնենք նաև **մեղեդիների զանազանությունը**, քանզի ինքը՝ Կոմիտասը, առանձնակի արժևորել է գեղջկական երգի անխառն ոճով ավե-

<sup>10</sup> Կոմիտաս, Երկերի ժողովածու (այսուհետ՝ ԵԺ), Երևան, 2000, հ. 10, N 20, էջ 54:

<sup>11</sup> Երեք օրինակն էլ վերնագրված են՝ «Արդ ցնծացեք» (տե՛ս Կոմիտաս, ԵԺ, հ. 10, N 20, 21, 22):

<sup>12</sup> Ընդհանուր առմամբ Կոմիտասը գրառել է թվով 8 ավետիս (տե՛ս աղյուսակները):

<sup>13</sup> «Արարատ», էջ 224:

տիսների մեղեդիները: Ժողովրդական ավետիսի ավանդական օրինակ է կոմիտասյան մեկ այլ գրառում.

**ՄԱՅՐԱՄ ԳՆԱՑ<sup>14</sup>**  
(Մոկք, գ. Գինեկանց)

[Զափավոր - միջակ]  
[Allegro moderato]

Մայ-րամ գը - նաց դուռն ի հ'է-րին, ա - վե-տիս,  
քյա-մակն է - գար խա - վա - քյա - ռին, ա - վե - տիս:

Այս «Ավետիսը» Կոմիտասը ձայնագրել է Մոկքի<sup>15</sup> Գինեկանց գյուղի<sup>16</sup> բնակիչ Նահապետ Աբրահամյանից՝ Նախո Քեռուց<sup>17</sup>:

Ժողովրդական ավետիսները, ըստ մեղեդային կառուցվածքի, կարելի է բաժանել երկու խմբի.

ա) **քրիստոնեության ժամանակաշրջանում եկեղեցական երաժշտությունից գեղջկականի մեջ թափանցած մեղեդիներ** (տե՛ս աղյուսակ I),

բ) **նախաքրիստոնեական ժամանակաշրջանից մեզ հասած ծիսական ժողովրդական մեղեդիներ** (տե՛ս աղյուսակ II):

Ներկա ուսումնասիրության համար առավել հետաքրքրական են երկրորդ խմբին պատկանող «Ծննդյան երգերը»: Պետք է նշել, որ այդ ժանրի բնորոշման փորձեր արվել են դեռևս XIX դարում: Ավետիսների խիստ **արխաիկ** բնույթի մասին նշում է Գարեգին վարդ. Հովսեփյանը և քրիստոնեության բովանդակային համակարգին կցվելն ավելի ուշ երևույթ համարում: Նա առաջինն էր, որ համեմատեց, ապա և մատնանշեց ժողովրդական և

<sup>14</sup> Կոմիտաս, ԵԺ, հ. 10, N 23, էջ 55:

<sup>15</sup> Մոկք [Մոկս] աշխարհ՝ երկրամաս Մեծ Հայքում, սահմանակից էր Վասպուրականին, Աղձնիքին և Կորճայքին: Մ.թ.ա. IX դ. Մոկքը մտել է Վանի թագավորության մեջ: Անվան ծագումը մի դեպքում կապում են հնագույն **մոսկ**, **մուշկ** ցեղանվան, մյուս դեպքում՝ **մոգ** (կրոնավոր իմաստով) բառերի հետ (տե՛ս ՀՀՇՏԲ, Երևան, 1991, հ. 3, էջ 863):

<sup>16</sup> Գինեկանց [Գինեկանց]՝ գյուղ Արմ. Հայաստանում, Վանի նահանգի Մոկսի գավառում: Գյուղում գտնվել է համանուն վանք, որն ունեցել է երկու եկեղեցի՝ Ս. նշան և Ս. Գևորգ: Եղել է գրչության կենտրոն: Գյուղի անունը կապվում է Ս. Գայանե (Ժող. Գինե) կույսի հետ (տե՛ս **Բաղայան Գ.**, Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդական նկարագիրը Մեծ Եղեռնի նախօրերին // «Վէմ» համահայկական հանդես, Երևան, 2015, հուլիս – սեպտեմբեր, թիւ 3, էջ XI):

<sup>17</sup> Նախո Քեռի՝ Նահապետ Աբրահամյան [մոտ 1851, գ. Գինեկանց – 1916-1920, Վաղարշապատ], էջմիածնի Գևորգյան ճեմարանի դռնապանն էր, որից 1886 թ. Մանուկ Աբեղյանը գրի առավ «Դավիթ և Միեր» պատումը: Նախո Քեռու ժողովրդական վեպի երգած չափածո հատվածները գրառել է Կոմիտասը (Ով ով է: Հայեր. Հանրագիտարան, Երևան, 2007, հ. 2, էջ 204):



տաղարանների ավետիսների առանձնահատկությունները<sup>18</sup>:

Ասատուր Մնացականյանը ավետիսների բանաստեղծական տեքստերն ուսումնասիրելիս հիշատակում է Աստվածատուր Հենեցուն<sup>19</sup> հիմք ընդունելով Մատենադարանի՝ 1556 թ. արտագրված N 8968 ձեռագիրը<sup>20</sup>, որում գրառված է տաղի հնագույն օրինակը<sup>21</sup>: Հեղինակը նաև նշում է հնագույն ժամանակներից պահպանված վկայություններն առ այն, որ ավետիսներում «իշխում է հին հոգին»<sup>22</sup>: Ա. Մնացականյանի ժողովրդական երգերի բանաստեղծական լեզվի վերաբերյալ վերլուծությունները չափազանց արժեքավոր են: Հեղինակը նշում է, որ տարբեր դարերում գրառված ավետիսներն իրենց տարբերակներով ընդհանուր առմամբ **համաժողովրդական լեզվով են երգվել**: Նույնիսկ այն ավետիսներում, որ մշակվել են հոգևորականության կողմից, որտեղ դիտվում է երգի բովանդակության որոշ հեղաշրջում, միևնույնն է, լեզուն մնացել է համարյա անփոփոխ: Բացատրությունը հետևյալն է. «...Եթե հոգևորականները փորձեին խախտել լեզուն, ապա պիտի խախտեին և՛ տաղաչափությունը, և՛ հանգավորումը, և՛ ընդհանրապես տվյալ երգի այն ամբողջ գրավչությունը, որից հենց ցանկանում էին օգտվել: Ուստի այդ երգերի համաժողովրդական լեզուն ավելի օգտակար էր նրանց համար, քան գրաբարը»<sup>23</sup>:

Մեծ արժեք է ներկայացնում Մանուկ Մանուկյանի ուսումնասիրությունը: Նա ավետիսները բնութագրում է որպես. «... ժողովրդի մեջ երգվող նոր տարվա նախաքրիստոնեական ավետման երգեր...»<sup>24</sup>:

Աշոտ Պատմագրյանը ժողովրդական ավետիսները դասում է ոչ թե **ծիսական**<sup>25</sup>, այլ **պաշտամունքային** ժանրին և դիտարկում որպես **տոմարային** երգեր, հեղինակի ձևակերպմամբ՝ «Ֆոլկլորի երգեր»<sup>26</sup>:

<sup>18</sup> Գ. վրդ. Յուսեփեան, ժողովրդական բանահիսույթեան հետքեր միջնադարեան տաղարաններից // «Արարատ», Վաղարշապատ, 1898, էջ 544:

<sup>19</sup> Աստվածատուր Հենեցուն են ընծայում «Այսօր տոն է Ծննդեան» տաղը, որը միջնադարյան տաղերգության սքանչելի նմուշներից է: Ըստ Հակոբ Անասյանի՝ «նա եղել է Չորրորդ Հայոց Հայնի կամ Հենի ավանից» (տե՛ս **Անասյան Հ.**, Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ., Երևան, 1976, հ. Բ, էջ 685):

<sup>20</sup> Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանում այդ մշակմանը կարելի է հանդիպել նաև N 3386, 695, 1677, 8540, 7694, 4335, 1990, 7704, 7315, 2002, 6987, 3540, 8274, 8682, 2339, 2079, 8219, 8294, 8376, 8611, 5394, 3229, 9077 և այլ ձեռագրերում (տե՛ս **Մնացականյան Ա.**, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 590):

<sup>21</sup> Ենթադրվում է, որ հեղինակը (Հենեցին) ապրել է XVI դ. առաջին կեսին (տե՛ս նաև՝ **Մուշեղյան Ա.**, Հայոց պատարագի տաղերն ու մեղեդիները // «Կոմիտասը և միջնադարյան երաժշտական մշակույթը», Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տարեգիրք, Երևան, 2016, էջ 305):

<sup>22</sup> **Մնացականյան Ա.**, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 563:

<sup>23</sup> **Մնացականյան Ա.**, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 103:

<sup>24</sup> **Մանուկյան Մ.**, ժողովրդական ավետիսների մեղեդիները, Էջմիածին, 1995, էջ 19-20:

Ավետիսներ գրառելու նպատակով Մ. Մանուկյանը կազմակերպել է նպատակային գիտարշավներ (տե՛ս նաև Մարտունու շրջանի ժողովրդական երգեր, կազմ.՝ Մ. Մանուկյան, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Երևան, 1997):

<sup>25</sup> Պատմագրյանը ծիսական է համարում միայն ողբերն ու հարսանեկան երգերը:

Արուսյակ Սահակյանը «Թալին» ժողովածուում զետեղված խիստ արժեքավոր ավետիսների երկու օրինակների ծանոթագրություններում գրում է. «...ժողովրդական ավետիսներն իրենց նստվածքներով առավել հին են ու վաղջական, քան եկեղեցական ծննդյան մեղեդիները»<sup>27</sup>:

Ուշագրավ է Միհրան Թումանյանի ձևակերպումը. «Ավետիսների շարքը առավելապես կապված է հին ավանդական սովորություններին: Կյանքի սկզբնավորության խորագրի հետ կապված տոներ կատարվել են թե՛ հեթանոսական և թե՛ քրիստոնեական զանազան ծեսերով: Մասնավորապես Կաղանդի, Նոր տարվա, ավանդության դարավոր հետքերը կրող այս ավետիսները շաղկապված են նաև «Կենաց ծառի» խորերգին, որ հեթանոսական և քրիստոնեական ծեսերի մեջ ի հայտ է գալիս Վահագնի կամ Քրիստոսի ծննդյան միստիկ պատկերացումով: Ժողովրդական հոգեբանությունը Կենաց ծառի ամենապարզ հասկացությամբ պատկերացրել է հարսի ու փեսայի ծաղկելն ու մանկան ծնվելը»<sup>28</sup>:

### ԾԱՌ ՄԻ ԿԱՆՉԵՐ<sup>29</sup>

♩ = 50

Ծառ մի կանչեր, ծառ մի կանչեր, ա - վե տիս,  
 շա - րոց թե - թեթ, պաս - տեղ թե - թեթ, ա - վե տիս,  
 մեր հարս - նե - թուն փայ - նա թե - թեթ, ա - վե տիս:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Լիլիթ Սիմոնյանի՝ ավետիսներին նվիրված ուսումնասիրությունը. հեղինակը, հնարավորինս մեկտեղելով մինչ օրս հրապարակված (ինչպես և անտիպ) ավետիսների շուրջ 8 տասնյակի հասնող օրինակների հիման վրա մանրակրկիտ վերլուծական աշխատանք է արել: Ավետիսների ընդհանուր բնութագրումից, ժանրի պայմանական դիտարկումից բացի, Լ. Սիմոնյանը քննության է առել ժանրի ծագման և զարգացման հարցերը, տվել բանաստեղծական տեքստերի և տիպական մեղեդիների վանկաչափական ու տաղաչափական սահմանումները<sup>30</sup>:

Ավետիսների սքանչելի օրինակներ կարելի է գտնել ինչպես միջնադարյան ձեռագիր մատյաններում<sup>31</sup>, այնպես էլ ազգագրական ժողովածուներ

<sup>26</sup> Պատմագրեան Ա., Հայ երգը դարերի միջից, Պեյրոյթ, 1977, էջ 41:

<sup>27</sup> «Թալին» Հայկական ժողովրդական երգեր և նվագներ, կազմ.՝ Ա. Փահլևանյան, Ա. Սահակյան, Երևան, 1984, էջ 30:

<sup>28</sup> Թումանյան Մ., Հայրենի երգ ու բան (այսուհետ՝ ՀեուԲ), «Ծառ մի կանչեր» («Ծառ է կանաչել») երգի ծանոթագրությունը, Երևան, 1972, հ. 1, N 19, էջ 206:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 65:

<sup>30</sup> Սիմոնյան Լ., Տոմարային ծիսաշար. Նոր տարի և Սուրբ Ծնունդ, Երևան, 2006, հ. 1, էջ 104-288:

<sup>31</sup> Տե՛ս N 16 տողատակը:

րում<sup>32</sup>: Ծիսական և տոնական երգերը, ժողովրդական երգաստեղծության առավել հին շերտերը կազմելով, չեն կարող սահմանափակվել միայն քրիստոնեության ժամանակաշրջանով: Ավետիսներում խտացվել են հայ ժողովրդի բազմադարյան պատմության ընթացքում ձևավորված ծիսական կարգերը և հազարամյակների խորքից եկած հնագույն տոները, որոնք պահպանվել են ոչ միայն հայերի, այլ նաև Հին Արևելքի ուրիշ ժողովուրդների կրոնական գրույցներում:

Ժողովրդական ավետիսների կառուցվածքին և բովանդակության խընդրին անդրադառնալով՝ Մ. Մանուկյանը պարզել է, որ ավանդական տեքստն ունի բազմամաս կառուցվածք<sup>33</sup>: Մեզ հասած ավետիսների հնարավորինս ամբողջական օրինակներում կարելի է սահմանագծել չորս հատված, որոնք, ըստ էության, միմյանց հետ բովանդակային կապ չունեն.

ա) Մարիամի Աստվածածին որդու ծննդաբերությունը,

բ) Իսկի ծառի հետևից գնալու, ծառը կտրելու և բերելու նկարագրությունը,

գ) սրբազան տաճարի կառուցումը,

դ) տան փոքրիկին օրհնելը և փայ-բաժին ուզելը:

Ներկա ուսումնասիրության համար առավել հետաքրքրական են միջին՝ կենտրոնական մասերը՝ Իսկի ծառի բերելը և տաճարի կառուցման հատվածները, որոնք ավետիսների առավել հին շերտն են կազմում և տանում են մեզ դեպի Հին Շումեր՝ մարդկության առաջին գրավոր սեպագիր հուշարձանները (մ.թ.ա. III հազարամյակ)՝ դեպի Գիլգամեշի մասին էպոսը և «Էն-Մերքարն ու Արատտայի գերագույն քուրմը» էպիկական պոեմը<sup>34</sup>:

Գիլգամեշի մասին դյուցազնավեպը պահպանվել և մեզ է հասել աշխարհի հնագույն չորս լեզուներով՝ շումերերեն (սումերերեն), արքադերեն

<sup>32</sup> Ժողովրդական ավետիսների բանաստեղծական տեքստերի հնարավորինս ամբողջական տարբերակները տե՛ս. **Ա. վրդ. Սեդրակեան**, Քնար մշեցոց եւ վանեցոց, Վաղարշապատ, 1874, էջ 5-6: **Շերենց Գ.**, Վանայ սագ, Թիֆլիս, 1885, էջ 79-80: **Գ. սրկ. Յովսէփեանց**, Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից (Մոկս), Թիֆլիս, 1892, էջ 23-24: **Գրիգոր ք. Նժդեհեանց**, Ալաշկերտի բանաւոր գրականութիւն // ԱՀ, Թիֆլիս, 1899, գ. V, էջ 188-189: **Լալայան Եր.**, Բորչալուի գաւառ // ԱՀ, Թիֆլիս, 1903, գ. X, էջ 253-255: Ավելի քան 80 ավետիսների բանաստեղծական տեքստերը մեկտեղված են Լ. Սիմոնյանի վերը նշված գրքում (տե՛ս Տոմարային ծիսաշար, հ. 1, էջ 243-288):

<sup>33</sup> **Մանուկյան Մ.**, Ժողովրդական ավետիսների մեղեդիները, Էջմիածին, 1995, էջ 29:

<sup>34</sup> Գիլգամեշը Ուրուկ քաղաքի տիրակալն էր (մ.թ.ա. XXVIII-XXVII դդ.) և ըստ մեզ հասած տվյալների՝ կառավարել է շուրջ 2600! տարի: Գիլգամեշի մասին հերոսական էպոսն առ այսօր Հին աշխարհի պահպանված ամենահին գրական ստեղծագործությունն է, սեպագրերով գրված ամենամեծ երկը՝ Հին Արևելքի գրականության խոշորագույն կոթողներից մեկը: Առաջին անգամ հայտնաբերվել է XIX դ. կեսերին Նինվեում՝ Աշուրբանիպալի գրադարանում կատարված պեղումների ժամանակ: Այն գրված է 12 վեցասյուն կավե պնակիտների վրա մանր սեպագրերով և ներառում է շուրջ 3000 տող (տե՛ս **Крамер С.** Шумеры. Первая цивилизация на Земле. Пер. с англ. А. Милосердовой. Москва, 2002):

(ասուր-բաբելոնյան), խեթերեն (հիթիթերեն) և խուրերեն (խուդիերեն)<sup>35</sup>: Այս առումով Նշան Մարտիրոսյանը<sup>36</sup> հավանական է համարել, որ էպոսը թարգմանված լինել փոքրասիական այլ լեզուներով՝ լուվիերեն, պալայերեն, ինչպես և խայերեն (Խայասան բնակեցնող մեր նախնյաց՝ հայագիների լեզուն):

Գիլգամեշի, Էնկիդուի և հսկա Խումբաբայի (Հումբաբա, Հուվավա) մասին գրույցները սիրված և տարածված են եղել Մերձավոր Արևելքի այլալեզու և այլացեղ ժողովուրդների բանավոր գրույցներում, որոնք երկրեերկիր, սերնդեսերունդ բերանացի սովորությամբ փոխանցել են դարերի խորքից հասած դյուցազնավեպերը: Ինչպես ցանկացած էպոսում, այնպես էլ Գիլգամեշի մասին էպիկական ասքում, պատմական իրադարձություններն ու կրոնական պատկերացումները միախառնվելով վերածվել են դիցաբանական գրույցների:

Իրավացի է Պիտեր Յենսենը, երբ գրում է. «Գիլգամեշ դյուցազներգությունը բաբելոնացիների համար նույնն է, ինչ Աստվածաշունչը մեզ համար»<sup>37</sup>:

Շումերական էպոսից մեզ հետաքրքրող հատվածը «Գիլգամեշը և Ողջերի Երկիրը» երգն է, որը հայտնի է նաև «Անմահների լեռը»<sup>38</sup> անվանումով (պնակիտներ III, IV, V): Էպոսի հերոսներ Գիլգամեշը և Էնկիդուն<sup>39</sup>, յոթ սար անցնելով, հասնում են Ողջերի երկիր՝ Անմահների լեռը, որտեղ, ավանդության համաձայն, աճում էին մայրիները: Գիլգամեշի և Էնկիդուի մուտքը մայրենիների անտառ հետևյալ կերպ է նկարագրված էպոսում. «Այնտեղ կեցած, հանդարտորեն կը նայեին: Կը զմայլեին մայրիներու բարձրությամբ: Նաև անտառին մուտքը իրենց զարմանք կը պատճառեր: Կը տեսնեին մայ-

<sup>35</sup> XX դ. սկզբներին՝ խեթական մայրաքաղաք Խաթթուշաշի (Խատտուսա) պեղումների ժամանակ, թագավորական դիվանում գերմանացի հնագետներ Հ. Վինկլերն ու Օ. Պոլստայնը հայտնաբերեցին էպոսի խեթերեն և խուրերեն խմբագրված տարբերակները:

<sup>36</sup> Ն. Մարտիրոսյանին է պատկանում խեթերենի և հայերենի մի շարք ընդհանրությունների հայտնաբերումը (տե՛ս **Մարտիրոսյան Ն.**, Հայերենի հարաբերությունը հեթերենի հետ // «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1924, N 9-10, էջ 413, 1926, N 7-8, էջ 369): Նա առաջինն է, որ կարողացել է որոշել խեթական սեպագիր արձանագրություններում հիշատակվող մի շարք ցեղային միավորումների և երկրների անվանումները, ինչպես և տեղադրել դրանք Հայկական լեռնաշխարհում (տե՛ս **Բարսեղյան Լ.**, Նշան Մարտիրոսյան // «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1966, N 1, էջ 301-302):

<sup>37</sup> Ականավոր արևելագետ Պ. Յենսենը (գերմ.՝ Herbert Bitner), ասորաբաբելոնական կրոնական գրականությունն ուսումնասիրելով, զուգահեռներ է անցկացրել հոմերոսյան հին հունական, եբրայական առասպելների, այդ թվում՝ Աստվածաշնչի հետ (տե՛ս «Գիլգամեշն ու համաշխարհային գրականությունը», գերմ.՝ **Jensen P.** Gilgamesch – epos in der Weltliteratur // “Deutsche Literaturzeitung”, Strasbourg, 1906, S. 901-911):

<sup>38</sup> Շումերերենում «երկիրը» և «լեռը» նույնիմաստ բառեր են:

<sup>39</sup> Գիլգամեշի անպատիժ գործողությունների ու բռնակալության դեմ պայքարելու նպատակով աստվածները կավից ստեղծում են Էնկիդուին: Քաղաքակրթությունից հեռու, վայրի գազանների միջավայրում մեծացած Էնկիդուին վիճակված էր դառնալ Գիլգամեշի մտերիմ ընկերը (տե՛ս **Афанасьева В.** Гильгамеш и Энкиду. Эпические образы в искусстве. Москва, 1979, стр. 110-111):

րիներու լեռը, աստվածներուն բնակավայրը, <...> նվիրական սուրբ տաճարը: Լեռան փեշերուն վրա կը բարձրանային հաստաբուն մայրենիները, որոնց շուքը բերկրանքով ու զովությամբ լեցուն էր»<sup>40</sup>:

Մայրիները կտրելու և բերելու նպատակը աստվածների աչքում բարձրանալը, փառք ու անմահություն ձեռք բերելն էր: Գտնելով իրենց «սրտի մայրիները»՝ հերոսները մենամարտում են սրբազան մայրիների պահապան Խումբաբայի (Հումվավա)<sup>41</sup> հետ: Գիլգամեշին ու Էնկիդուն սատարելու եկած 50 փահլևանների օգնությամբ հսկա մայրիներն իջեցնում են սարից, ապա Եփրատով լուղարկում դեպի Ուրուկ<sup>42</sup>:

Как услышал Гильгамеш слово Энкиду,  
Боевой топор он поднял рукою,  
Выхватил из-за пояса меч свой, –  
Гильгамеш поразил его (Хумбабу) в затылок,  
Его друг, Энкиду, его в грудь ударил;  
На третьем ударе пал он,  
Замерли его буйные члены,  
Сразили они наземь стража Хумбабу,  
На два поприща вокруг застонали кедры.  
Сразил Энкиду стража леса,  
Чье слово чтили Ливан и Сариа,  
Покой объял высокие горы,  
Покой объял лесистые вершины.  
Он сразил защитников кедра –  
Разбитые лучи Хумбабы.  
Когда их всех семерых убил он,  
Боевую сеть и кинжал в семь талантов<sup>43</sup>,  
Груз в восемь талантов, – снял с его

Մարտական կացինը բարձրացրեց ձեռքով,  
Դուրս հանեց գոտուց իր սուրը,  
Գիլգամեշը խոցեց նրա ծոծրակը,  
Նրա ընկեր Էնկիդուն կրծքին հարվածեց.  
Երրորդ հարվածի վրա ընկավ նա,  
....  
Գետնին տապալեցին պահապանին,  
Խումբաբային,  
Երկու ասպարեզ<sup>45</sup> շառավիղով մայրիները տնքացին.  
Նրա հետ միասին Էնկիդուն անտառներն ու մայրիները սպանեց:  
....  
Էնկիդուն բարբառում է նրան, Գիլգամեշին.  
«Եղբայր իմ, Գիլգամեշ: Մենք տապալեցինք մայրիները:  
Մարտական կացինը գոտուցդ կախիր,  
Շամաշի առաջ հեղում կատարիր,  
Եփրատի ափը տանենք մայրի-

<sup>40</sup> Տե՛ս **Մարտիրոսյան Ն.**, Գիլգամեշ. Հին Արևելքի դյուցազնավեպ, շում. թարգմ.՝ Ն. Մարտիրոսյանի, Երևան, 1963, էջ 49:

<sup>41</sup> Հումբաբա (Խումբաբա, Հումվավա)՝ շումերա-աքքադական դիցաբանության մեջ հսկա հրեշ, մայրիների անտառի պահապան: Մասնագետների կարծիքով Հումբաբա հսկայի անունը շատ ավելի հին է, քան ինքը՝ պատմական Գիլգամեշը (տե՛ս *История Древнего Востока. Месопотамия*. Под ред. И. Дьяконова. Москва, 1983, стр. 306).

<sup>42</sup> Տե՛ս **Краммер С.** *История начинается в Шумере*. Под ред. и с пред. В. Струве, перев. с англ. Ф. Мендельсона. Москва, 1965, стр. 209-210.

<sup>43</sup> Талант, տաղանդ՝ չափի միավոր, ≈ 30 կգ:

<sup>45</sup> Հայերեն [հուն.՝ stadion] հեռավորության չափը սահմանվել է Բաբելոնում մրցավազքի ժամանակ: Այն հավասար է 600 ոտնաչափի (≈ 300մ):

тела, ները»<sup>46</sup>:  
 Жилище Ануннаков тайное открыл  
 он.  
 Гильгамеш деревья рубит,  
 Энкиду пни корчует.  
 Энкиду ему вещает, Гильгамешу:  
 «Друг мой, Гильгамеш! Мы кедр  
 убили, –  
 Повесь боевой топор на пояс,  
 Возлей перед Шамашем возлиянье,  
 –  
 На берег Евфрата доставим кедр-  
 ры»<sup>44</sup>.

Եթե շումերական էպոսում խնկենին բերելու են գնում Գիլգամեշն ու Էնկիդուն, ապա ժողովրդական ավետիսներում, որպես կանոն, դրանք երեք մոգերն են՝ Մելլոնը, Գասպարն ու Բադդասարը, կամ էլ 40 փահիկանները<sup>47</sup>.

### Ծննդեան տունին (հատված)

Իմա՛լ էնենք, իմա՛լ չէնենք:  
 Քառսուն փէտատ (քլունգ), քառսուն կացին  
 Առնինք, էրթանք ծառ խնկենին<sup>48</sup>:

Ավետիսներում կտրած խնկի ծառը 40 լծկան գոմեշներով իջեցնում են սարից, ապա լուղարկում դեպի Ուրֆա<sup>49</sup>.

<sup>44</sup> Эпос о Гильгамеше, “О все видавшем”. Пер. с аккад. И. Дьяконова, репр. изд. (ориг. изд. 1961). Санкт-Петербург, 2012, тб. V.

<sup>46</sup> Հին Արևելքի պոեզիա, կազմ. և խմբ.՝ Հ. Էդոյան, հայ. թարգմ.՝ Էդ. Սարոյան, Երևան, 1982, էջ 126:

<sup>47</sup> Ավետիսներում 40 թիվը խորհրդանշական է: Քրիստոնեության համար կարևոր իրադարձություններն այդ թվով են իմաստավորվում. այդքան օր տևեց Մեծ ջրհեղեղը, և այդքան օր Նոյը մնաց տապանում, Դավիթ և Սողոմոն արքաներն այդքան տարի են տիրել Իսրայելին, 40 տարի Մովսեսը եբրայեցիների հետ շրջեց անապատում և այդքան օր մնաց Սինա լեռան վրա, այդքան օր Քրիստոսը ծնվել է և Հարությունից հետո այդքան օր է մնացել երկրի վրա:

<sup>48</sup> Գրիգոր ք. Նժդեհեանց, Ալաշկերտի բանաւոր գրականութիւն // ԱՀ, Թիֆլիս, 1899, գ. Ե, N 1, էջ 188-189:

<sup>49</sup> Ուրֆա [Ուռհա, Եդեսիա] քաղաքի հիմնադրման մասին պահպանվել են մի քանի ավանդություններ: Դրանցից մեկի համաձայն՝ քաղաքը հիմնադրել է Բելը, ըստ մեկ այլ ավանդության՝ այն կառուցվել է Աստվածաշնչում հիշատակված Ուր կոչված քաղաքի ավերակների վրա: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքից հետո նրա զորավար Սելևկոսը քաղաքը վերանվանեց Եդեսա (Էդեսա), մեկ աղբյուրի համաձայն՝ ի պատիվ իր դստեր, մյուս աղբյուրի համաձայն՝ Մակեդոնիայի նույնանուն քաղաքի պատվին: Ուրֆա-Եդեսիան բոլոր ժամանակներում շարունակել է մնալ Միջագետքի խոշոր կրոնապաշտամունքային կենտրոններից մեկը: Եդեսիայում է ապրել Օսրոյենների թագավորության Աբգար V հայոց արքան, որը նամակագրություն է ունեցել

Ձառ խնգենին, ուր շրոճեցին, ավետի՛ք,  
 Քառսուն դան (տան) գոմեշ ուզեցին, ավետի՛ք,  
 Ուր պերեցին, ուր լճեցին, ավետի՛ք,  
 Սամին, սամթել ճրխճրխեցին, ավետի՛ք,  
 Խըբար առան Ուրֆը քաղաք, ավետի՛ք...<sup>50</sup>

Կան ավետիսներ, որտեղ մոգերը հիշատակվում են հպանցիկ և հետագա բովանդակության զարգացման մեջ այլևս չեն հիշատակվում (ստորև ներկայացվող «Թալին» ժողովածուի ավետիսը), ինչպես և հակառակը, որտեղ մոգերի թեման զարգացած է՝ մանուկ Հիսուսին երկրպագելը, երեք ընծաներ մատուցելը ևն: Այդ ավետիսները պայմանականորեն ընդունված է անվանել **«աստեղային»** (աստղի հետևից գնալը):

#### Այսօր տօն է Ծնընդեան<sup>51</sup> (հատված)

Ահա երեք արքա եկին, ավետիս.  
 Որ երեքեանըն անուանին, ավետիս.  
 Մելքոն, Գասպար և Բաղդասար, ավետիս.  
 Որք՛ի Սաբայ և յարաբայ, ավետիս.  
 Ոսկի՛ կնդրուկ՝ զըմուռ նմա, ավետիս.  
 Ունին երեք ազնիւ ընծայ, ավետիս.  
 Ոսկին զպատին արքայական, ավետիս.  
 Կընդրուկն ըզգարդ Աստուածութեանն, ավետիս.  
 Զըմուռ որ էր անապական, ավետիս.  
 Նըշան թաղման և յարութեան, ավետիս:

Տարածված են նաև **«քրիստոնեական»** բանաստեղծական տեքստերով ժողովրդական ավետիսներ<sup>52</sup>.

#### Երանելի<sup>53</sup> (հատված)

Մարիամ առավ իր մէր Որդին, ավետիս,  
 Տարաւ նրան աշկերտութեան, ավետիս,  
 Երբ այբութեն գիր գրեցին, ավետիս,  
 Նա կըկարդար Սաղմոսարան, ավետիս,

Հիսուս Քրիստոսի հետ: Մեսրոպ Մաշտոցի՝ հայ գրերի ստեղծման գյուտը նույնպես կապված է Եդեսիայի հետ (տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 167-168):

<sup>50</sup> «Թալին», էջ 69:

<sup>51</sup> Քնար հայկական. Երգարան, խմբ.՝ Մ. Միանսարեանց, Ս. Պետերբուրգ, 1868, էջ 91-93:

<sup>52</sup> Տե՛ս Մատենադարան, ձեռագիր N 5954, թերթ 99ա-100ա, գրառվել է XVIII դ., առաջին անգամ տպագրվել է Ա. Մնացականյանի «Հայ միջնադարյան ժողովրդական երգեր» գրքում, Երևան, 1956, էջ 331-332: **Քաջբերունի**, Տօներ // ԱՀ, Թիֆլիս, 1901, գ. VII և VIII, էջ 115-116: **Կոստանեանց Կ.**, Նոր ժողովածու, Միջնադարեան հայոց տաղեր և ոտանաւորներ, Թիֆլիս, 1892, Ա պրակ, էջ 16-17:

<sup>53</sup> Տե՛ս **Փորքէեան Խ.**, Նոր Նախիջևանի բանահյուսութիւն. Աւետիսներ // ԱՀ, Թիֆլիս, 1910, գ. XX, N 2, էջ 102-104:

Սաղմոսարան երբ գրեցին, ավետիս,  
 Նա կըկարդար շարականներ, ավետիս,  
 Շարականներ երբ գրեցին, ավետիս,  
 Նա կըկարդար աստվածաբան, ավետիս...<sup>54</sup>

Նմանօրինակ ավետիսներ վերլուծելիս Լ. Սիմոնյանն իրավացիորեն նշում է. «Տեքստը շնչում է քրիստոնեական երգերին բնորոշ խորհրդապատկերային և տոնի խորհրդի ոգեշնչվածությամբ, գրեթե ամբողջությամբ կառուցված է Աստվածաշնչյան թեմաների հիմքով... Ընդհանուր առմամբ՝ լեզվամտածողությամբ, մոտիվներով և կառույցով «քրիստոնեական» տեքստը հեղինակային-գրական է, սակայն բավական շատ են նաև ժողովրդական տարրերը...»<sup>55</sup>:

Ժողովրդական ավետիսների գրեթե բոլոր օրինակներում «մայրիները կացնահարելու» տեսարանի նկարագիրը համարյա թե նույնն է: Կոմիտասի, Մ. Թումանյանի, Սպ. Մելիքյանի կատարած գրառումներում ավետիսները տրված են մեկ կամ երկու տիպական տողերով: Ստորև ներկայացվող երկու ավետիսները հնարավորինս ամբողջական բանաստեղծական տեքստով մեզ հասած **երգվող** ավետիսների ուշագրավ օրինակներ են:

### ԱՎԵՏԻՏ<sup>56</sup> (Մուշ)

♩ = 160

Ը - սօր ձը-նունդ էր Մըյ - ռա-մին, ա - վն - տիք,  
 շըն - չաց պե - ռեց զՀի-սուս օր - դին, ա - վն - տիք,  
 կես Օր - դա - նան մը - գըր - դե - ցին, ա - վն - տիք,  
 Մեյ - քոն, Կաս-պար, Տեր Բաղ - դա - սար, ա - վն - տիք:

Ըսօր ձընունդ էր Մըյրամին, ավետի՛ք,  
 Շնչաց պերեց զՀիսուս օրդին, ավետի՛ք,

<sup>54</sup> Խաչատուր Փորթեյանի վկայությամբ այս ավետիսն առավել սիրված է եղել «ղարիքների տանը»: Եթե Ճրագալույցի երեկոյան շնորհավորելու եկող տղաները «Երանելին» ավետիսը չիմանային, մեծահասակներն այն մեղք կհամարեին և նրանց ներս չէին թողնի:

<sup>55</sup> **Սիմոնյան Լ.**, Տոմարային ծիսաշար, էջ 146-147:

<sup>56</sup> «Թալին», N 1, էջ 62, 69-70 (երգասացն է 80-ամյա մշեցի Ռեհան Գուլոյանը, ծն. 1890-ական թթ.): «Ավետիքի» մեկ այլ տարբերակ տե՛ս նույն տեղում, N 2 (երգասացն է Վարդանուշ Ղուկասյանը, Սասուն):



Կետ Օրդանան մգրդեցին, ավետի՛ք,  
 Մելքոն, Կասպար, Տեր Բաղդասար, ավետի՛ք,  
 Էլան վերցին գթաղսին<sup>1</sup>, կացին<sup>2</sup>, ավետի՛ք,  
 Կացին սարով, իճան ծորով, ավետի՛ք,  
 Մելքոն, Կասպար, Տեր Բաղդասար, ավետի՛ք,  
 Կացին հըսան ձառ խնգենին, ավետի՛ք,  
 Առճին գացին<sup>3</sup> ուր<sup>4</sup> զըրգեցին, ավետի՛ք,  
 Գաթ մը արուն ուր բոխացին, ավետի՛ք,  
 Ձառ խնգենին, ուր շըռճեցին, ավետի՛ք,  
 Քառսուն դան<sup>5</sup> կումեշ<sup>6</sup> ուզեցին, ավետի՛ք,  
 Ուր պերեցին, ուր լճեցին, ավետի՛ք,  
 Սամին<sup>7</sup>, սամթել<sup>8</sup> ճըխճըխեցին<sup>9</sup>, ավետի՛ք,  
 Խըբար առան Ուրֆը քաղաք, ավետի՛ք,  
 Բառբու մոզիկ ուր պերեցին, ուր լճեցին, ավետի՛ք,  
 Աեճին հորհոր<sup>10</sup> ուր էնեցին, ավետի՛ք,  
 Ասիս-Մասիս սար ւնցըցին, ավետի՛ք,  
 Մինի հորոր ուր էնեցին, ավետի՛ք,  
 Գաթնոց ախպուր ճուր խըմցըցին, ավետի՛ք,  
 Հեդին<sup>11</sup> հորհոր ուր էնեցին, ավետի՛ք,  
 Տաջարի տուռ ուր կանըցին, ավետի՛ք...<sup>57</sup>

Ինչպես արդեն վերը նշվեց, ներկա ուսումնասիրության համար հետաքրքրություն են ներկայացնում **ավանդական** ժողովրդական տեքստերով ավետիսները. մեր խորին համոզմամբ ավետիսների առավել արխաիկ շերտերը պահպանվել են հենց այդ տեսակներում: Ավետիսներում նշմարվում են մի շարք օրինաչափություններ՝ պայմանավորված տվյալ ժանրին բնորոշ տաղաչափական, մեղեդիական, ձևակառուցողական, մետրադիթմական տիպական առանձնահատկություններով: Ավետիսների ճնշող մեծամասնությունը շարադրված է ութվանկանի տաղաչափությամբ<sup>58</sup>.

կամ՝ Այ – սօր Ծը – նունդն էր Մայ – ըա – մի,  
Մայ – ըամ գը – նաց դուռն ի հէ – ըին

<sup>57</sup> 1) գթաղսի, թաղսի – կացին, 2) կացին – գացին, գնացին, 3) գացին- կացին, թաղսի, 4) ուր – որ, 5) դան – տան, 6) կումեշ – գումեշ, 7) սամի, սամիք – եզի, գումեշի, լճափայտին կապող ձողիկներ, որոնք պատրաստվում են շատ ամուր փայտից կամ երկաթից, 8) սամթել, սամիթել, սամոտեն – սամիքը կապելու պարան, որպես կանոն՝ կաշվից, 9) ճըխճըխեցին – ջախջախեցին, 10) հորհոր – բացականչություն՝ հո-ր, 11) հեդին – վերջին:


<sup>58</sup> Որպես կանոն ավետիսների առաջին մասերում տաղաչափությունը կայուն պահպանվում է (Հիսուսի Ծնունդը, Խնկի ծառը, տաճարի կառուցումը նկարագրող հատվածները), և միայն վերջին՝ չորրորդ հատվածում (տան փոքրի օրինանքը) նկատվում է ազատ շարադրանք:

Յուրաքանչյուր տող ավարտվում է եռավանկ՝ «ա - վե - տիս» կամ «յա - լե - յու» կամ էլ՝ քառավանկ «ա - լե - լու - յա» **կրկնակով**: Այսպիսով, ունենք 11-վանկանի (8+3) կամ 12-վանկանի (8+4) տողերով կառույց<sup>59</sup>: Ավետիսների **յամբական երկանդամ 8-վանկանի ոտանավորի** գլխավոր շեշտերը 4-րդ և 8-րդ վանկերի վրա են.

Ա - ռին խի - զիւ՛ր, ա - ռին կյիւ՛ - ցի՛ն,  
Գիւ՛ - ցին խա - սա՛ն Չան - չա՛ մե - րի՛ն...

և պետք չէ կարծել, թե այս չափը յամբական միանդամ **4-վանկանի** ոտանավորի կրկնությունն է: Աբեղյանն իրավացիորեն նշում է. «Ռիթմիկ երաժշտականության կողմից մեր այս շատ սիրված ոտանավորը (ութվանկանի) մեր չափերի մեջ լավագույններից է, զի սովորաբար թե՛ պարզ և թե՛ բարդ ոտքերի ռիթմն զգալի է»<sup>60</sup>: Ուշագրավ է, որ այս վանկաչափական մոդելը բնորոշ է նաև սլավոնների Ծննդյան երգերին՝ **կոչադաներին**. Մասնագետների կարծիքով երգի «մոտորային» կշռույթը պայմանավորված է քայլելու՝ երթի ընթացքում կատարվելու ֆունկցիայով<sup>61</sup>:

Ժողովրդական ավանդական ավետիսների (ինչպես և տոնական, ծիսական, վիպական ժանրերին պատկանող ցանկացած երգ) ձևակառուցողական կարևորագույն բաղադրիչը **երաժշտական բանաձևային մտածողությունն է՝** մեղեդու տիպական (մոդուլային) **կառուցվածքը**: Ծննդյան երգերում գերիշխում է էոլական լադը<sup>62</sup>, որտեղ գործուն նշանակություն ունի վերջնաձայնից՝ ֆինալիսից (T) ցած ընկած դորիական տրիխորդը.



Չափազանցություն չի լինի, եթե նշենք, որ VI<sup>+</sup> → VII → T վերընթաց քայլը հայկական ժողովրդական երգաստեղծության **հնագույն կորիզն է**. այդ երաժշտական դարձվածքով են սկսվում հայ երգաստեղծության առավել արխաիկ շերտը կազմող **ծիսական** երգերը<sup>63</sup>:

<sup>59</sup> Հազվադեպ հանդիպում են նաև այլ վանկաչափական մոդելներով ավետիսներ, որոնք կարելի է շեղում համարել (օրինակը տե՛ս **Վարդանյան Ս.**, Պաշտամունքային տարրերը «Ալեյույայի» արցախյան տարբերակներում // ՊԲՀ, Երևան, 2002, N 2, էջ 151):

<sup>60</sup> **Աբեղյան Մ.**, Երկեր, Երևան, 1971, հ. 5, էջ 168-169:

<sup>61</sup> Տե՛ս **Земцовский И.** Мелодика календарных песен, Москва, 1975, стр. 48; **Можейко З.** Календарно-песенная культура Белоруссии. Минск, 1985, стр. 89.

<sup>62</sup> Մենք խուսափում ենք լադի **հիպոդորիական-էոլական** ձևակերպումից, քանզի դորիական բարձր սեքստան (VI<sup>+</sup>) գործում է միայն ստորին հատվածում, իսկ T-ից վեր քառալարում այն բացակայում է:

<sup>63</sup> Այդպես, օրինակ, նորափեսային գովերգող երգերի՝ Թագվորագովքերի («Մեր թագվորին ի՛նչ պիտի», «Թագվոր բարով», «Գացե՛ք, բերե՛ք, թագվորամեր»), ինչպես

ԵՐԳ ԾՆՆԴՅԱՆ<sup>64</sup>

$\text{♩} = 46$

Հա-սօր ծը-նունդն ի Մար-յա-մա, ա - լե-լու-յա, Մար-յամկյը-նաց  
տոտն ի հե-րին, ա - լե-լու-յա, քյա-մակ ի-տու խա - չա-փե-տին,  
ա - լե-լու-յա, շըն-չավ ի-պի Քյրիս - տոսոր-տին, ա - լե-լու-յա:

Հասօր ծընունդն ի Մարյամա,  
ալելույն,  
Մարյամ կյընաց տոտն ի հերին,  
ալելույն,  
Քյամակ իտու խաչափետին,  
ալելույն,  
Շընչավ իպի Քյրիստոս տորտին,  
ալելույն:  
Հիսուս տորտուն մըկըրտեցին,  
ալելույն,  
Պարթ խանձարուր փարթեցին,  
ալելույն,  
Սուրփ Հօվանէս քյաւոր էրին,  
ալելույն,  
Սուրփ Հօնօմսիմ տատմէր էրին,  
ալելույն:  
էրանէկ քյի, սուրփ Հօվանէս,  
ալելույն,  
Տալ Քյրիստոսին քյաւոր էլար,  
ալելույն,  
էրանէկ քյի, սուրփ Հօնօմսիմ,  
ալելույն,  
Տալ Քյրիստոսին տատմէր էլար,  
ալելույն,  
էրանէկ քյի, կյետ Հօրտանան,  
ալելույն,

Արին կյերան, կըկարճանէր, ալելույն,  
Տրիցին սուն՝ կըհէրկնանէր, ալելույն,  
Պատեր տըրին, թըմըմիցին,  
ալելույն:  
Կապին տանիս, տառ տըրանդին,  
ալելույն:  
Ծեր տան սըներ ծառ ին խընգյի,  
ալելույն,  
Պատեր շարուկ մարմար քյարից,  
ալելույն,  
Ալաշ վերէն ծալ-ծալ տսկի, ալելույն,  
Խողն ի վերէն սուրփ մարկըրիտ,  
ալելույն,  
Թօնէր ինի քյանց յեղկացին,  
ալելույն,  
Տախտակ վերէն՝ փինա ծածկոց,  
ալելույն,  
Խարսներ պարկոր քյանց յեղվընէկ,  
ալելույն,  
Ավելն ի ծեռ փունջ մանուշակ,  
ալելույն:  
Արմեն ճուր էր, էլ ճըթացավ,  
ալելույն,  
Քյանց բարդի ծառ էլ հէրկնացավ,  
ալելույն,  
Քյանց ուղի ծառ էլ կանչավ,

և Բարեկենդանի («էկե՛ք, տեսե՛ք, ի՞նչն է կերե զինչ») երգերի ճնշող մեծամասնության մեջ այդ մեղեդիական քայլն առկա է:

<sup>64</sup> «Հայրենի երգեր», Հայրիկ Մուրադյանի ծայնից վերծ., կազմ. և խմբ.՝ Ա. Փահլանյան, Երևան, 2007, N 57, էջ 86, 90-91:

Քրիստոս մնչ քի մըկըրտեցին,  
 ավելոյն:  
 Էրանեկ քի, պմլրթ խաննձմրուր,  
 ավելոյն,  
 Քրիստոս մնչ քի փաթաթիցին,  
 ավելոյն,  
 Էրանեկ քի, պանցրիկ մսուր,  
 ավելոյն,  
 Քրիստոս մնչ քի օրորեցին,  
 ավելոյն:  
 Առին խիզմար, առին կացին, ավելոյն,  
 Կյացին խասան Չանչա մերին,  
 ավելոյն,  
 Կյացին զարկին ծառըն տըքյաց,  
 ավելոյն,  
 Խիզմար թացին՝ էրուն ֆըռշաց,  
 ավելոյն:  
 Արին, չարին չուր կըտրիցին,  
 ավելոյն,  
 Քյառսուն կյումէշ մէշ լըծիցին,  
 ավելոյն,  
 Մէկ խատ մէկու չըտժիցին, ավելոյն,  
 Սըսմ, Մասսմ սարն ընցուցին,  
 ավելոյն,

ավելոյն,  
 Քյանց կաղնի ծառ էլ պընդացավ,  
 ավելոյն:  
 Արմեն նըստիր ծառի տակին,  
 ավելոյն,  
 Բըռչամ թպիր ծառի ծերին, ավելոյն,  
 Սուֆրէն հիրճև՝ խնգար պմրին,  
 ավելոյն,  
 Կըթխէն ի ծեռ նըռան կյինին,  
 ավելոյն:  
 Մամիկ, մամիկ յէս քի ծառա,  
 ավելոյն,  
 Տուն մանունին մէկ գյնվ արա,  
 ավելոյն,  
 Սօլեր խակյի, տը ճըռվըռա, ավելոյն,  
 Կոթնին խակյի, տը խըշխըշա,  
 ավելոյն,  
 Մաղըմ կօքյօվ, մեկն էլ չամիչ,  
 ավելոյն,  
 Նմ տըղէտեր ճամբխու արա,  
 ավելոյն:

Ինչպես շումերական էպոսում<sup>65</sup>, այնպես էլ ժողովրդական ավետիսներում Խնկենին տապալվում է երեք հարվածից.

Ջառչի (առաջին) թաղսին (կացին) օր զրկեցին, ավետի՛ք,  
 Ծառն օր ճըչաց, ճուղն որոտաց, ավետի՛ք,  
 Մինի թաղսին որ զըրկեցին, ավետի՛ք,  
 Կաթ մը արուն ուր բոխաց, ավետի՛ք,  
 Եղի թաղսին օր զըրկեցին, ավետի՛ք,  
 Ծառ խնկենին պառկցցին, ավետի՛ք...<sup>66</sup>

Ժողովրդի բանավոր հիշողության ծայքերում զարմանալի տողեր են պահպանվել.

Առին խիզմար (սղոց), առին կյացին (կացին),

<sup>65</sup> Առաջին երկու հատվածը երկսայր կացնով (секира)՝ տապարով (1 տաղանդ քաշով ≈ 30 կգ) հասցնում է Գիլգամեշը (ծոծրակին և կրծքին), երրորդ հարվածով էնկիրուն թրով գլխատում է հսկային: Հումբաբային հասցրած ամեն մի հարվածից մայրիները տնքում էին:

<sup>66</sup> «Թալին», էջ 70:

Կյւնցին (գնացին) խասան **Չանչա մերին**

Կյւնցին (կացին) գւնրկին ծառըն տըքյաց,

Խիզւնր թւնցին էրուն (արյուն) ֆըշաց,

Արին, չարին չոր կըտրիցին,

Քյունուն կյունէշ մէշ լըծիցին...<sup>67</sup>

Ինչպես վկայում է Ա. Փահլևանյանը Հայրիկ Մուրադյանի խոսքերից, «Չանչա մերին» (մայրի) եղել է սրբազան անտառ՝ մայրիների պուրակ: Բառարաններում չգտնելով «Չանչա» բառի բացատրությունը՝ հնարավոր ենք համարում, որ այն Շամաշ աստծո՝<sup>68</sup> [Չանչա-Չամչա-Շամշա] անվան աղավաղված տարբերակն է:

«Друг мой, Гильгамеш! Мы кедр  
убили, –  
Повесь боевой топор на пояс,

Возлей перед Шамашем возлиянье, –  
На берег Евфрата доставим  
кедры»<sup>69</sup>.

«Եղբայր իմ, Գիլգամեշ: Մենք  
տապալեցինք մայրիները:  
Մարտական կացինը գոտուցդ  
կախիր,

Շամաշի առաջ հեղում կատարիր,  
Եփրատի ափը տանենք  
մայրիները»<sup>70</sup>:

Մասնագետների կարծիքով մայրիների «որսը» շատ ավելի վաղ է սկսվել, քան այդ մասին հիշատակում են Աքքադի տիրակալներ Սարգոն Շարուկմենի (մ.թ.ա. 2316-2261) և Նարամ Սուլեի (մ.թ.ա. 2237-2200) սեպագիր արձանագրությունները<sup>71</sup>: Պետք է նշել, որ Լիբանանի լեռները, որտեղից իբրև բերել են մայրիները, հիշատակված են միայն էպոսի աքքադերեն տարբերակում, ամենայն հավանականությամբ Սարգոն արքայի՝ դեպի Լիբանան կատարած արշավանքների տպավորությամբ: Անհնար է պատկերացնել, թե ինչպես էր հնարավոր Լիբանանի լեռներից մայրիները Եփրատով լուղարկել դեպի Ուրուկ (Շումեր), այն դեպքում, երբ Լիբանանը Եփրատի ավազանի հետ կապ չունի ու չի էլ ունեցել: Պետք է նշել՝ էպոսի ավելի վաղ՝ շումերական տարբերակում մայրիների «հայրենիքը» չի հիշատակվում<sup>72</sup>: Միջազգետքյան

<sup>67</sup> «Հայրենի երգեր», էջ 90:

<sup>68</sup> Շամաշը [շումեր. Ութու] աքքադա-բաբելոնական դիցաբանության մեջ արևի աստվածն էր, որն ուղղորդում և քաջալերում էր Գիլգամեշին: Հումբաբային սպանելու և սրբազան անտառից մայրիներ բերելու միտքը Շամաշն էր խրախուսում, այդ իսկ պատճառով մայրիների անտառը երբեմն կոչել են «Շամաշի մայրիներ»: Աքքադա-բաբելոնացիների արևի աստված Շամաշի պաշտամունքն առայսօր պահպանված է եզդիների հավատքում:

<sup>69</sup> Эпос о Гильгамеше, “О все видавшем”.

<sup>70</sup> Հին Արևելքի պոեզիա, կազմ. և խմբ.՝ Հ. Էդոյան, հայ. թարգմ.՝ Էդ. Սարոյան, Երևան, 1982, էջ 126:

<sup>71</sup> Sumerian History of the Ancient East. Mesopotamia. Под ред. И. Дьяконова. Москва, 1983, стр. 306:

<sup>72</sup> Մայրիների լեռների տիրակալ Խուվավան [Հումբաբա] իրեն համարում էր **խու-**

սկզբնաղբյուրները վերլուծելով՝ անվանի ասորագետ Վլադիմիր Յակոբսոնը հայտնում է, որ շումերները մայրին բերում էին ոչ թե Լիբանանից, այլ Շումերից հյուսիս-արևելք ընկած լեռներից՝ Հայկական լեռնաշխարհից: Նա միաժամանակ նշում է մայրու մի քանի տեսակ՝ հիշատակված շումերական աղբյուրներում, որոնք առայսօր աճում են Հայկական լեռնաշխարհում՝ Զագրոսի լեռներում<sup>73</sup>:

Հասկանալի է, որ **մայրին**<sup>74</sup> շումերական էպոսում խորհրդանշում է **Կենաց ծառ** (Տիեզերական ծառ, Կյանքի ծառ, Arbor mundi)՝ իր խորհրդարանական պաշտամունքային ողջ համակարգով, որի կարևորագույն բաղադրիչն է **սարը**, լեռը՝ տիեզերական կենտրոն (axis mundi)<sup>75</sup>: Մայրին օգտագործվել է շատ կարևոր և թանկ շինությունների՝ Դավթի, Սողոմոնի և Երուսաղեմի տաճարների կառուցման համար (Թագ., 5:11, 7:7): «Մեր տների գերանները մայրուց են, ու մեր առաստաղները եղևնափայտից» (Երգ Երգոց, 1:17) տողերում, մայրու հավիտենական խորհրդից գատ, Օրիգենեսն ընդգծում է բարոյական կողմը. «Մեր տների հիմնասյուները պատրաստված են մայրենուց, որպեսզի մեր հոգիները պահպանված լինեն տարրալուծումից»՝ նկատի ունենալով մայրու անփուտ և անապական հատկությունը<sup>76</sup>.

«Սրունքները մարմարյա սյուներ են՝  
Ընտիր ոսկուց խարիսխների վրա հաստատված.  
Կերպարանքը՝ Լիբանանի պես,  
Մայրիների պես գերազանց»: (Երգ Երգոց, 5:15)

Մայրիների փարթամ անտառները հարյուրավոր տարիներ զարդարել են Լիբանանի լեռները, և Հին Արևելքի ժողովուրդների կողմից դարեր շա-

**ռում** լեռան որդի: Խոտոտմի հետ կապը ենթադրում է, որ մայրիների լեռները գտնվել են Վանա լճի հարավ-արևելք տարածվող լեռների [Կորդվաց, այժմ՝ Հաքլարի] շրջանում (տե՛ս **Մովսիսյան Ա.**, Հնագույն պետությունը Հայաստանում, Արատտա, Երևան, 1992, էջ 17):

<sup>73</sup> **Якобсон В.** Куда Гильгамеш ходил за кедррами? // “Кавказско-Ближневосточный сборник”, Тбилиси, 1988, VIII, стр. 128-132.

<sup>74</sup> Մայրին [Кедр, Cedrus] սոճազգիների ընտանիքի մշտադալար փշատերև ծառերի ցեղ է, որը բարենպաստ կլիմայական պայմաններում կարող է ունենալ 5-6 մետր բնի հաստություն, շուրջ 50 մ բարձրություն և ապրել մոտ 3000 տարի: Հին Հայաստանում հարգի է եղել հատկապես փյունիկյան մայրին: Մայրին մարդկությանը հայտնի ամենամուր և թեթև փայտերից մեկն է, որի թանկարժեք խեժը Հին աշխարհում շատ բարձր է գնահատվել: Ծառի բարձր խեժատվությունն ապահովում էր փայտի «հականեխիչ և անփուտ» հատկությունները, որոնք անփոխարինելի էին նավաշինության մեջ: Ավանդության համաձայն՝ Նոյի տապանը պատրաստված է եղել մայրու փայտից, որն Աստվածաշնչում հիշատակված է «գոֆեր» անունով (տե՛ս Библийская энциклопедия. Трудъ и издание Архимандрита Никифора. Москва, 1891, 1990, стр. 387).

<sup>75</sup> Տե՛ս **Топоров В.** Мировое Древо. Универсальные знаковые комплексы. Москва, 2010, том 2, стр. 306-324.

<sup>76</sup> Экзегетические труды Оригена: Толкование на Ветхий Завет // Альманах “Альфа и Омега”, Москва, 2004, N 42.

րունակ մայրին պաշտամունքի է արժանացել. բնական էր, որ քրիստոնեությունն այդ հավատամքը պիտի ժառանգեր:

Հայոց մեջ **մայրու** մեծ պաշտամունքի վկայություն է «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, որն իր անունը ստացել է Խոսրով Գ Կոտակ (գահակալել է 330-338 թթ.) թագավորի պատվին: Գառնու ամրոցից մինչև Մեծամորի դաշտը՝ Դվինի բլուրը, Խոսրովը կատարեց անտառատնկումներ. «Եվ այսպես **մերի** (մայրի) տնկեցին գետի ընթացքով (Երասխ) դեպի ներքև՝ Տիկնունի ապարանքը: Նա այս մերին (անտառը) կոչեց Տաճար մայրի: Մի ուրիշ մերի էլ տնկեցին նրանից դեպի հարավ՝ եղեգնուտի եզերքով, և ամբողջ դաշտը լցրին կաղնի տնկով. սրա անունն էլ դրին Խոսրովակերտ: Երկու մերիներն էլ պարիսպներով փակեցին, առանց իրար հետ կցելու, անցուդարձի ճանապարհի համար: Մերին աճեց ու բարձրացավ»<sup>77</sup>:

Թե որքան պաշտելի է եղել մայրին հայոց մեջ, վկայում է ծառի անվանումը՝ մայրի (մայր, մայրիկ, ծնող) իմաստով: «**Մայր**» արմատը փոխառնված չէ ոչ մի լեզվից և **բնիկ հայ բառ** է (սանսկրիտում՝ *mātar*, հնդկ. Նախալեզվում՝ *māter*, որից էլ լատիներեն *materia*՝ «շինութեան համար փայտ, նիւթ»<sup>78</sup>):

Ավետիսներում, ինչպես կարելի է նկատել, մայրու փոխարեն հիշատակվում է **խնկի ծառը**, և առհասարակ հայկական ժողովրդական երգերում խնկենին **նվիրական ծառի** իմաստ ունի: Նշենք, որ **խնկենին** չի սահմանափակվում մեկ ծառատեսակով, և մեզ հայտնի առնվազն չորս տարբեր ծառատեսակներ կարող են հավակնություն ունենալ նվիրյալ **խնկի ծառի** «կոչմանը»: Այն խնկենին, որից ստանում են **խունկը**՝ խնկախեժը, **Բոսվելիա**<sup>79</sup> [*Boswellia*] ծառի տեսակն է: Խնկախեժը ստանում են բոսվելիայի կեղևը կտրելով, իսկ ծառի զարմանալի հատկություններից է վերականգնողականությունը. կտրված կեղևը շատ արագ փոխարինվում է նոր աճածով: Մեր ունեցած տվյալների համաձայն՝ Հայկական լեռնաշխարհում բոսվելիան չի աճել.

«Մեր դռանը խնկի ծառ...  
Ձեր դռանը խնկի ծառ»...

Նմանատիպ տարածված և սիրված խաղիկներում ժողովուրդը հա-

<sup>77</sup> Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, գլ. Ը, էջ 32-33:

<sup>78</sup> Աճառյան Հ., ՀԱԲ, Երևան, 1977, հ. 3, էջ 246-247:

<sup>79</sup> Բոսվելիան 4-5-մետրանոց (հազվադեպ 6 մ) ծառ է, մուգ շագանակագույն ամուր բնով և թղթանման կեղևով: Աճում է հիմնականում Կարմիր ծովի հյուսիսային շրջաններում, հատկապես առատ՝ Արաբիայում և Սոմալիում: Դեռևս հին եգիպտացիները, խիստ պաշտելով խնկենին, փորձեր են կատարել այն աճեցնելու Եգիպտոսում, բայց ապարդյուն: Անհիշելի ժամանակներից խնկախեժը եղել է առևտրի կարևոր միավորներից և շուկայում մեծ պահանջարկ ունեցող մթերքներից: Պարսկաստանում առայսօր տարբերում են «երկու սեռի» խնկախեժ՝ «արական» (մուգ դեղին, կարմրավուն) և «իգական» (բաց դեղնավուն, սպիտակ):

վանաբար նկատի է ունեցել **Պիստակենին**<sup>80</sup> կամ **Նշենին**<sup>81</sup>, երկուսն էլ առավել հայտնի են **խնկի ծառ** անվամբ: Սակայն, եթե պիստակենին սովորական պտղատու ծառ է, ապա նշենին բացառիկ դեր և նշանակություն ունի կրոնական խորհրդաբանական համակարգում: Փոյուզիական տիեզերաբանության մեջ Խնկենին (նշենի) հանդես է գալիս որպես բնության արարման նախահայր<sup>82</sup>, Իսրայելի որդիների 12 ցեղերի միջև պայքարն ավարտվեց Ահարոնի հաղթանակով, նա միակն էր, ում գավազանը բողբոջեց՝ պատվելով նշենու ծաղիկներով և պտուղներով (Թվոց XVII, 8): «Բարի ավետում»-ը ներկայացվող տեսարանում Մարիամի կողքին պատկերված է խնկենին<sup>83</sup>:

Այդուհանդերձ, վերադառնանք «Ծննդյան երգերին» և **մայրի-խնկենուն**: Ավետիսներում սրբազան տաճարի կառուցման նկարագիրը ժողովրդական չափաճո բանահյուսության կոթողներից է.

Ծեր (ծեր) տան սրներ (սյուներ) ծառին խընգյի,  
 Պատեր շարուկ մարմար քյարից,  
 Ալաշ (տանիք) վերէն ծալ-ծալ տսկի,  
 Խողն (հողը) ի վերէն սուրփ մարկյըրիտ,  
 Թօնէր (թոնիր) ինի քյանց յեղկանցին (եկեղեցին)  
 Տախտակ վերէն՝ փինա (ասեղնագործ) ծածկոց,  
 Խասներ պակոր քյանց յեղվընեկ (աղավնի)  
 Ավելն ի ծեռ փունջ մանուշակ...<sup>84</sup>

Աստվածային տուն-տաճարի կառուցման նկարագիրը պարզապես հիացնում է բանաստեղծական երևակայությամբ. խնկի ծառից պատրաստված սյուները, մարմարյա պատերը, վրան մարգարիտ շաղ տված (այլ տարբերակներում՝ խնկի փոշի) և ոսկու շերտով պատած տանիքը, եկեղեցի

<sup>80</sup> Պիստակենին [Pistacia] 6-8 մ բարձրությամբ ծառ է, համեղ և սննդարար պտուղներով՝ պիստակներով («Ֆլատիս»): Պտուղներն ունեն տոնուսը բարձրացնող հատկություն, որի շնորհիվ պիստակենին անվանում են «կյանքի ծառ» (տե՛ս **Հարությունյան Լ.**, Հայաստանի դենդրոֆլորան, Երևան, 1985, հ. 2, էջ 88):

<sup>81</sup> Նշենին [Amygdala] մինչև տերևների հայտնվելը բնության մեջ առաջինն է բողբոջում և ծաղկում: Հայաստանի բնության մեջ բնաշխարհիկ է, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

<sup>82</sup> Բնության զարթոնքի, վերարտադրողական ուժերի, մեռնող և հարություն առնող աստծո՝ փոյուզիացի Ատտիսի մայրը՝ կույս Նանան, կրծքին դնելով նշենու ճյուղը, հղիացել և լույս աշխարհ է բերել Ատտիսին (տե՛ս **Փրօզեր Դ.** Золотая ветвь. Москва, 1980, стр. 387):

<sup>83</sup> Քրիստոնեության մեջ խնկենին (նշենի) աստվածային, բարեհաճության, անմեղության և անարատության խորհրդանիշն է: Աստվածամոր և Քրիստոսի կերպարների շուրջ լուսապսակը՝ մանդորլան [լատ. mandorla՝ նուշ], որն աստվածային լույսի խորհրդանիշ է, նույնպես նշածն է (տե՛ս Символы, знаки, эмблемы // Энциклопедия, Москва, 2005, стр. 286):

<sup>84</sup> «Հայրենի երգեր», էջ 91:



դարձած թոնիրը<sup>85</sup> ևն: Որոշ ավետիսներում տաճարը նույնացվում է Երուսաղեմի կամ Էջմիածնի հետ. երկնային քաղաք-տաճարի կառուցման համար մեկ գերան սյուն է պակասում.

Երուսաղեմ նոր շինեցին, ավելուե՛ա,  
Շինեցին, թամամեցին, ավելուե՛ա,  
Սան մ'ու գերան պակասեցուցին, ավելուե՛ա...<sup>86</sup>  
Էջմիածին որ շինեցին, ավելուե՛ա,  
Սին ու գերան բար (հավասար) բռնեցին, ավելուե՛ա,  
Ուստա բնէք շիվարցուցին, ավելուե՛ա...<sup>87</sup>

Ավետիսներում նկարագրվող տուն-տաճարի կառուցման վերաբերյալ Ա. Մնացականյանը գրում է. «Նավասարդյան տոնախմբությունների ժամանակ կառուցվել են հատուկ դեկորատիվ շենքեր: Այդ շենքերը շատ հնում ձգտել են արտահայտել նախնիների և ամբողջ տոհմի պատկերն ու գաղափարը, իսկ հետո այդ ֆոնի վրա երևան են եկել նոր աստվածությունների գաղափարները»<sup>88</sup>:

Ավետիսի այդ հատվածը որքա՞ն հեռավոր ժամանակների հետքեր կարող է կրել... Անշուշտ, այն կարելի է կապել քրիստոնեական գաղափարախոսության հետ, սակայն այդ դեպքում կկորցնենք առնվազն 3000 տարի:

Տաճարի կառուցման նմանատիպ հատվածների հանդիպում ենք «Էն-Մերքարը և Արատտայի գերագույն քուրմը պոեմում»<sup>89</sup>:

О, сестра моя Инанна! Сделай так, чтобы жители Аратты  
Искусно выделывали золото и серебро для Урука,  
Чтобы они приносили благородный лазурит<sup>90</sup>, извлеченный из скал,

<sup>85</sup> Թոնիրը (օջախը) տան ամենասուրբ մասն է համարվել, ինչպես եկեղեցում՝ խորանը: Օջախը նույնացվել է ընտանիքի, գերդաստանի, տոհմի հետ: Այն գյուղերում, որտեղ եկեղեցի չի եղել, պսակի արարողությունը կատարել են տան օջախի շուրջը (տե՛ս **Լալաեան Եր.**, Հաւատք. Կրակի պաշտամունք // ԱՀ, Թիֆլիս, 1897, գ. Բ, էջ 194-196):

<sup>86</sup> **Գրիգոր ք. Նժդեհեանց**, Ալաշկերտի բանաւոր գրականութիւն // ԱՀ, Թիֆլիս, 1899, գ. Ե, էջ 188:

<sup>87</sup> **Վ. վրդ. Տեր-Սինասեան**, Անգիր դպրութիւն եւ հին սովորոյթներ, Կ. Պոլիս, 1904, էջ 26:

<sup>88</sup> **Մնացականյան Ա.**, Հայկական զարդարվեստ, էջ 563:

<sup>89</sup> «Էն-Մերքարն ու Արատտայի գերագույն քուրմը» էպիկական պոեմը Շումերի տարածքում պեղումների ընթացքում առայսօր հայտնաբերված ամենաճավալուն տեքստն է և առավել հինը՝ համաշխարհային գրականության մեջ այդ ժանրի առաջին օրինակը: Պոեմը վերականգնվել է 20 պնակիրների վրա (23x23 սմ, 12 աղյուսների բաժանված շուրջ 600 տող) փորագրված սեպագիրներից (տե՛ս **S. N. Enmerkar and the Lord of Aratta. A Sumerian tale of Iraq and Iran. Philadelphia, 1940, p. 17**).

<sup>90</sup> Լաջվարդի [լազուրիտ] ամենամեծ հանքերը Բաղաշխանում են [Աֆղանստան], այդ իսկ պատճառով որոշ մասնագետների կարծիքով Արատտան գտնվել է այդ տարածքում: Ասորական աղբյուրները հայտնում են նաև Վանի թագավորությունում լաջվարդի հանքերի մասին (տե՛ս **Дьяконов И.** Ассиро-вавилонские источники по истории Урарту // “Вестник Древней истории”, Москва, 1951, N 50 (41)).

Чтобы они приносили драгоценные камни и благородный лазурит,  
 Пусть они построят...  
 Священный гипар<sup>91</sup>, который ты избрала своим жилищем,  
 Пусть народ Аратты искусно украсит его изнутри.  
 Тогда я сам вознесу в нем молитвы...  
 ...  
 Пусть жители Аратты  
 Принесут со своих высот горные камни  
 И построят для меня большой храм, большое святилище,  
 Воздвигнут для меня большое святилище, святилище богов...<sup>92</sup>

Сарасате очень приветливо меня встретил и поблагодарил за мой приход. Я, в свою очередь, поблагодарил его за вчерашний концерт, за его игру и за большой сбор, который получила наша касса. Он улыбнулся и сказал: “Это ничего, это ничего”, и сейчас же взял со стола футляр с ручкой, открыл и начал восхищаться камнем и его тонкой, художественной отделкой золотом. Я смотрел и не верил своим глазам: чтобы Сарасате, имевший мировую славу и огромное состояние, мог радоваться, как ребенок, нашему подарку, стоящему всего двести пятьдесят рублей, в то время как он своим вчерашним концертом дал нашей кассе почти в десять раз больше. Такая по-детски радостная душа Сарасате очень меня трогала и умиляла. С

---

<sup>23</sup> Александр Вержбилович (1850- 1911) - российский виолончелист.

такой же детской радостью и серьезностью он показывал двое золотых часов с крупными бриллиантами. Одни – подарок испанской королевы с ее бриллиантовыми инициалами, другие – от испанцев Южной Америки. Кроме этих двух часов с двумя цепочками, Сарасате еще носил, как брелок, прикрепленный к середине этих цепочек, маленький, с мизинец величиной, скрипичный футляр, в котором находилась миниатюрная копия его скрипки Страдивариуса тончайшей художественной работы. Никогда нельзя было бы себе представить, что возможно сделать такую микроскопически маленькую скрипку, которая могла бы, во всех отношениях, быть такой поразительной копией Страдивариуса. Эта копия-миниатюра была преподнесена Сарасате в Париже его почитателями. Сарасате гордился этой вещью и любил показывать ее. К деньгам Сарасате относился очень пренебрежительно: никогда ничего не считал. Извозчикам, за самые малые концы, платил рубль, три, пять, не считая – какую бумажку вынул, то и давал.

При мне как-то утром пришел устроитель его концертов, владелец первой в городе художественной типографии. Он принес деньги за два концерта Сарасате и почтительно передал толстую пачку, обернутую в бумагу. Сарасате взял ее и небрежно бросил в открытый ящик стола, не закрыв его. Этот деловой человек стал сразу очень серьезным, улыбка исчезла с его лица, он подошел ко мне с обиженным видом, а Сарасате в туфлях, в утреннем наряде, расхаживал по комнате, заложив руки за спину. “Что за человек, – сказал мне устроитель концертов, – я ему принес за два концерта пятнадцать тысяч рублей, а он, не только не пересчитал их, но даже не развернул бумагу и не посмотрел: деньги там или что другое”. Я, в утешение, сказал ему, что Сарасате знает, какой почтенный человек устроитель, и что он считает не деликатным проверять его, и что, вообще, Сарасате странный: он к деньгам относится как ребенок, и ни во что их не ставит. Устроителю, считавшему деньги превыше всего, мое объяснение показалось непонятным, и он, недовольный, скоро ушел.

Многие приходили к Сарасате, и если он имел возможность, то всех принимал. Молодежь приходила просить его автограф, другие – видеть и выразить свой восторг, а нуждающиеся, музыканты и не музыканты, просили помощи. Сарасате никогда никому не отказывал, всем помогал, не считая денег, и все это делал с такой милой, приветливой улыбкой и с такой вежливостью, что я, видевший его несколько раз за этим, невольно любовался им, его благородством.

Сарасате держал себя всегда с большим достоинством. Он никогда не суетился, не торопился, все движения его были плавны, спо-

койны. Сердитым или взволнованным я его никогда не видел, а также не помню, чтобы он громко говорил или хохотал.

Сарасате, как мне тогда казалось, так сроднился со своей мировой славой, со своим высоким положением, со своей независимостью и богатством, что ни в чем, ни при каких обстоятельствах этого не чувствовалось. Сарасате со своей очаровательной любезностью и деликатностью был всегда очень выдержан, прост и доступен для всех просящих, словно не он оказывал им помощь, а они делали ему одолжение тем, что принимали ее!

Сарасате ничего не рассказывал о своей, полной феерических успехов жизни, но сам очень любил и умел слушать. С глубоким почтением и уважением говорил о своих старших по возрасту коллегах – Венявском и Иоахиме. К Ауэру, с которым Сарасате был почти одних лет, он относился очень дружественно и благожелательно и высоко ценил его как артиста и педагога.

В тот же приезд Сарасате Ауэр выступил на симфоническом концерте с сюитой Направника<sup>24</sup> и на бис сыграл адажио<sup>25</sup> девятого концерта Шпора<sup>26</sup>. На концерте присутствовал Сарасате. Я очень боялся, как бы присутствие Сарасате не отразилось на игре Ауэра, но, к моей большой радости, это выступление Ауэра было одним из счастливых: сюиту Направника сыграл очень хорошо, а адажио Шпора было замечательно во всех отношениях. Сарасате тоже понравилось, он сказал мне, что Ауэр доставил ему большое удовольствие с адажио Шпора.

После концерта мы, несколько учеников Ауэра во главе с ним и Сарасате, пошли в ресторан Лейнера ужинать. В этом ресторане после концертов и театральных представлений собиралось большое количество музыкантов, художников, писателей и ученых. Во время ужина мы рассказывали много смешных историй, вызывавших веселье, переводили их Сарасате, который тихо смеялся и, в свою очередь, тоже рассказывал что-нибудь подобное. Один из нас, не помню кто, сказал что-то очень легкомысленное по поводу загробной жизни. Сарасате сразу перестал улыбаться, лицо его стало серьезным и печальным. Ауэр сердито посмотрел на говорившего. После некоторой паузы Сарасате сказал: “Нельзя так говорить, разве мы знаем, что нас ожидает там”. Наступило общее молчание. Мне было очень обид-

---

<sup>24</sup> Эдуард Направник (1839-1916) – чешский и русский композитор, дирижер.

<sup>25</sup> Адажио – медленный музыкальный темп.

<sup>26</sup> Луи (Людвиг) Шпор (1784-1859) – немецкий скрипач, композитор, дирижер.

но, что один из нас своим нетактичным рассказом оскорбил Сарасате...

...Я очень интересовался, как и когда Сарасате занимается на скрипке. Его самого спросить об этом я стеснялся и решил обратиться с этим вопросом к его слуге, мусье Жаку – спокойному пожилому человеку, который давно служил у Сарасате и сопровождал его во всех поездках. На мой вопрос, в какое время дня Сарасате занимается на скрипке, мусье Жак ответил, что мусье Сарасате так часто и много играет на своих концертах, что дома ему совсем не нужно играть. И притом, играть дома, одному, без публики, ведь это очень скучно. Вот когда мусье Сарасате натягивает новые струны, которые уже заранее приготовлены и вытянуты у мастера, тогда он немного играет, чтоб убедиться в их качестве и пригодности.

Такое понятие о занятиях на скрипке слуги Сарасате привело меня в полное недоумение, о чем я в тот же день рассказал Ауэру. “Какой счастливец Сарасате, – заметил мой учитель, – не то, что мы, рабы скрипки, которые должны каждый день работать, тогда как он живет в свое удовольствие”. А затем сердито добавил: “А зачем ему играть, когда и без того все у него выходит”. Сказав это, Ауэр грустно посмотрел на свои руки и вздохнул...

...Однажды, в день концерта, Сарасате пригласил меня завтракать. В назначенный час я пришел к нему в Европейскую гостиницу. Когда я вошел в номер, застал там парикмахера, который брил Сарасате. После бритья тот оделся, и мы пошли в ресторан завтракать. Сарасате просил меня заказать то, что я хочу, а сам велел принести себе зеленого салата, горчицы, перцу, соли, прованского масла, большую миску и начал готовить салат. Все это он делал очень важно и серьезно, точно священнодействовал. Сарасате, когда все было готово, так же серьезно сказал, что он в день концерта ничего другого не ест, кроме салата, им самим приготовленного. Сарасате предложил мне своего салата, который был, нужно сказать, изумительно вкусный.

Разговор наш, как всегда, был очень незначительный: не затрагивал никаких серьезных тем. Он говорил мало, сам задавал вопросы, заставляя меня рассказывать. После завтрака пригласил зайти, посмотреть его скрипку. Я подумал: наконец услышу, как он дома играет. Когда мы вошли в его комнату, Сарасате велел принести кофе и предложил замечательных папирос из гаванского табака.



После того, как мы выпили кофе, Сарасате подошел к футляру, открыл его и, не вынимая скрипки, начал смотреть на струны. Потом подозвал меня и спросил: “Ça va?”<sup>27</sup>, на что я ответил, что струны в порядке. “Я тоже так думаю”, - сказал Сарасате и закрыл футляр. Я был очень разочарован и с досадой подумал: в день концерта он ничего не ест, кроме салата, им самим приготовленного, точно в этом салате все дело, а между даже не берет в руки скрипку и только смотрит, в порядке ли струны!

В тот же день вечером на концерте, между другими номерами программы, была труднейшая фантазия “Отелло” Эрнста<sup>28</sup>. С большим интересом я ждал эту вещь, которую раньше не слышал в исполнении Сарасате. Он сыграл ее также легко и непринужденно, как пил со мной днем черный кофе и курил свои любимые папиросы. Вся фантазия Сарасате сыграл шутя, легко, поразительно законченно, все пассажи звучали так красиво, изящно, что из этой нагроможденной трудностями, тяжеловесной пьесы получилась новая по характеру и звучанию вещь. Я не слышал ни одной сомнительной ноты, ни одного неудавшегося флажолета, а только отчетливые, блестяще искрящиеся пассажи...

...Сарасате, как композитор, живет до сих пор и, я думаю, будет жить еще долго: его произведения очень эффектны и дают большую возможность скрипачам проявлять их виртуозные качества. Не обладая таким талантом, творчеством и техникой композитора, как Вьётан и Венявский, Сарасате все же обогатил музыку своими испанскими танцами и двумя концертными фантазиями на темы “Фауста” Гуно и “Кармен” Бизе. Особенной популярностью пользуются испанские танцы Сарасате: Малагуэна, Хабанера, Интродукция и Тарантелла, Плайера и Сапатеадо, Интродукция и Хота, а также романс “Андалуза” и, особенно, “Цыганские напевы”, написанные на народные венгерские мотивы. Про эту последнюю пьесу Ауэр при мне сказал Сарасате, что она имеет более венгерский характер, чем то, что пишут сами венгерцы.

Успех и ценность испанских танцев Сарасате в том, что для них он использовал чисто народные мелодии, которые очень умело обработал для скрипки, украсив их своеобразными, легко и изящно звучащими, эффектными пассажами.

К испанским танцам Сарасате сделал простой, примитивный ак-

---

<sup>27</sup> Все в порядке? (франц.).

<sup>28</sup> Генрих Эрнст (1814-1865) - австрийский скрипач и композитор.

компанемент, часто напоминающий гитару, что очень подходит к этим мотивам, так как испанцы поют свои народные песни под несложный аккомпанемент гитары.

Такие простые, ненагроможденные аккомпанементы Сарасате, как в танцах, так и в его фантазиях, дают возможность скрипачам в пассажах играть легко, прозрачно, не напрягаясь, без страха быть покрытым аккомпанементом...

...Пабло де Сарасате родился в Северной Испании, в Наварре, в 1844 году. Музыкальное образование получил в Парижской консерватории, по скрипке у Массара<sup>29</sup>. Знаменитый виолончелист Давидов<sup>30</sup> говорил своему другу, моему знакомому, что когда он был в Париже, он слышал на выпускном экзамене в консерватории Сарасате, который был хорошим скрипачем, но ничего не представлял из себя выдающегося.

После окончания консерватории Сарасате, как видно, начал очень серьезно работать над собой. В процессе самостоятельной работы кроющийся в нем феноменальный скрипичный талант заставил Сарасате искать новых, более совершенных путей скрипичной игры. Как долго продолжались эти искания Сарасате, неизвестно, но в конечном итоге он нашел самого себя, свой собственный путь, приведший его к всемирной славе. И все же, я думаю, эти искания и большая работа Сарасате продолжались довольно долго после окончания им Парижской консерватории. Он делается знаменитым лишь после своего артистического путешествия по Германии и Англии в 1876–77 гг., когда ему уже было 32–33 года. Игра Сарасате впоследствии, когда он достиг вершин совершенства, олицетворяла то, к чему привели его долгие поиски и стремления: к небывалой до него в скрипичной игре красоте, законченности и совершенству звучаний в кантлене и пассажах. Для этого Сарасате специально приспособил свою скрипку и смычок. Он играл на низко опущенных струнах и слабо натянутым смычком. В таком положении струн и смычка невозможно было извлекать сильные, насыщенные звуки, брать размашисто аккорды, делать большие акценты, широко водить крепко сидящим смычком по струнам. Но, как видно, именно этого и не

---

<sup>29</sup> Ламбер Жозеф Массар (1811-1892) - французский скрипач и музыкальный педагог.

<sup>30</sup> Вероятно, И. Налбандян имеет в виду виртуозного русского виолончелиста, главу русской виолончельной школы второй половины XIX века Карла Давыдова (1838-1889).

хотел Сарасате.

Сила, мощь, страстность – эти проявления сильных внутренних переживаний были не в его натуре, как это ни странно, если учесть, что Сарасате был испанцем. Всеми своими чувствами он стремился к красоте и совершенству...

...У Сарасате была широкая ладонь с чудными, сильными, упругими пальцами, которые падали на струны легко, без стука. Он подымал их очень мало и расстояние между струнами и пальцами было таким ничтожным, что казалось, будто пальцы не поднимаются, а только шевелятся. Сарасате, конечно, мог своими крепкими пальцами играть даже на высокоподнятых струнах, но, опустив их ниже нормального, он достигал этим большой экономии в движениях пальцев, что способствовало ровности и легкости их движения в пассажах на высоких позициях, где для получения должной звучности невольно приходится их напрягать при высоко, даже нормально поднятых струнах. Сарасате так же, почти не отрывая пальцев от струн, играл терции и сексты<sup>31</sup>. Все двойные ноты у Сарасате звучали чисто, обстоятельно и как-то особенно певуче. Изумительны были глиссандо – как вверх, так и вниз<sup>32</sup>. Замечательная трель – ровная, ясная, без единого перебора, без всякого напряжения – казалась удивительно быстрой и, из-за восхитительных перемен смычка Сарасате, бесконечной.

Пиццикато<sup>33</sup> Сарасате не отличалось силой, но оно было удивительно ровно – как в смысле ритма, так и одинаковой силы пальцев в щипках, и поэтому звучало в зале ясно, отчетливо и казалось очень быстрым, как и все пассажи Сарасате. Флажолеты<sup>34</sup> звучали кристально чисто, ясно, прозрачно и замечательно легко. О гаммах, арпеджио<sup>35</sup> и разнообразной мелкой технике Сарасате, не вдаваясь в многословие, скажу: звучали волшебным...

---

<sup>31</sup> Терция и секста – названия музыкальных интервалов.

<sup>32</sup> Глиссандо – особый прием игры, заключающийся в быстром скольжении пальца по струнам или клавишам музыкального инструмента.

<sup>33</sup> Пиццикато – прием игры на смычковых струнных музыкальных инструментах, когда звук извлекается не смычком, а щипком струны.

<sup>34</sup> Флажолет – прием игры на струнных музыкальных инструментах, заключающийся в извлечении звука путем частичного прижатия струны в точках деления ее длины на определенные части (высота звучания струны при этом повышается на октаву). Название приема связано с тем, что извлекаемый с его помощью чуть глуховатый звук напоминает тембр флейты (старофр. *flageolet* – маленькая флейта).

<sup>35</sup> Арпеджио – способ музыкального исполнения на струнных и клавишных инструментах, когда звуки аккорда извлекаются не одновременно, а поочередно, в разбивку.

...Нельзя себе представить более счастливого соотношения рук, чем у Сарасате: качество пальцев левой руки идеально гармонировало с качеством пальцев правой, контакт рук был до того замечательный, точно они представляли собой одно целое. Штрихи Сарасате были так же легки и подвижны, как и его пальцы: почти непрыгающий смычок в спиккато<sup>36</sup>, арпеджио всех видов, летучее стаккато<sup>37</sup>, очень короткое и легкое деташе у колодки и во всех других местах смычка только прикосновением волос смычка к струнам, без какого-либо нажима и, наконец, извлечение звука, как казалось, одним весом смычка, создавали полную иллюзию единства правой руки с пальцами. Целыми смычками и широкими деташе Сарасате пользовался только в кантилене<sup>38</sup>, и то не такими широкими, как мы себе это представляем.

Перемена во всех частях смычка была идеальна: для этого Сарасате пользовался незаметным движением кисти, причем пальцы не принимали никакого участия, они не сгибались и не выпрямлялись, и вообще – что бы он ни играл, пальцы его всегда оставались на смычке, он их никогда не поднимал...

...Манера Сарасате держать скрипку и положение его рук было нормально и естественно. Скрипка почти лежала на его плече, локоть был отведен немного назад, шейку он держал обыкновенно: большой палец, немного согнутый в первом суставе, находился против второго пальца, кисть была согнута в направлении подставки. Пальцы Сарасате ставил очень кругло, они никогда не лежали на конечных подушечках первого сустава, когда же он шел на верхние позиции, то его большой палец спускался вниз и в этом же положении, опираясь концом первого сустава, скользил дальше по шейке. Сарасате держал скрипку легко, непринужденно и без всякого напряжения головы... Казалось, что смычок шел по струнам сам по себе, без нажима и давления, а Сарасате лишь направлял его.

Несколько слов о вибрации Сарасате. Она была локтевая, при совсем свободной кисти, с самыми минимальными движениями, незаметными для глаз. Вибрация Сарасате была сказочно красива: она звучала удивительно ровно, не ускоряясь и не замедляясь, совсем

---

<sup>36</sup> Спикатто – бросок смычка на струну с целью извлечения короткого отрывистого звука.

<sup>37</sup> Стаккато – короткое, отрывистое воспроизведение музыкальных звуков.

<sup>38</sup> Кантилена – вокальная или инструментальная мелодия напевно-лирического характера.

не было слышно повышения и понижения звука; очень мягкая и нежная, она своими колебаниями напоминала мерцание звезд в тихий морозный вечер...

...Значение Сарасате в истории скрипичной игры исключительно велико. Его появление произвело колоссальную сенсацию: он чаровал и потрясал публику своей волшебной игрой, сводил ее с ума совершенством звуков и красотой исполнения. В его руках скрипка не была больше скрипкой, она потеряла все свои неприятные, специфические стороны, которые причиняли столько огорчений и страданий всем скрипачам, начиная с малых и кончая великими.

Многие скрипачи, даже известные, жаждали узнать, в чем секрет такого необычайного звучания скрипки в его руках. Всем, кто видел вблизи скрипку, смычок Сарасате и хорошо рассмотрел манеру его игры, стало ясно, что дело “только” в том, что у скрипки Сарасате низко опущены струны и слабо натянут смычок, и что он слабо ставит пальцы, почти не поднимая их со струн, и, меняя смычки, делает какое-то маленькое, непонятное движение кистью.

Все эти скрипачи начали во всем этом слепо подражать Сарасате, но с печальными результатами: по-своему, как умели, они играли хорошо, а когда начали подражать, совсем потеряли себя. Другие в скором времени поняли, что дело не в том, в чем они подражали Сарасате, а в его феноменальном таланте, и что эти его особенности, которым так легко было подражать, были для него только вспомогательным средством...

...Сарасате никого не учил, он не оставил ни одного ученика, но своим появлением произвел огромный переворот в понятиях скрипачей о качестве звука – переворот, который в дальнейшем сильно отразился на культуре скрипичной игры. До Сарасате было немало талантливых, крупных, выдающихся европейских скрипачей. Между ними были великие, даже гениальные исполнители, но в отношении качества извлекаемых ими звуков они были почти одинаковы между собой: у одних было больше специфических скрипичных призвуков, у других – меньше. До появления Сарасате все играющие и слушающие до того сжились с этими призвуками, что не замечали их, а если и замечали, то считали эти призвуки неотъемлемым свойством скрипки. Огромное впечатление от такой идеальной звучности при игре Сарасате заставило скрипачей не подражанием, как это было вначале, а большой работой над правой рукой улучшить качество

звуча. В течение десятилетий эта работа скрипачей-исполнителей и педагогов над собой и своими учениками дала огромнейшие результаты: на большую высоту поднялся уровень культуры звука, хотя все они шли к этой цели иными путями, нежели Сарасате.

В истории скрипичной игры велика заслуга Сарасате – этого чародея красоты звучания и технического совершенства!

Ленинград

Иоаннес Налбандян

2 апреля 1941 г.



հատկապես Մեծ եղեռնի տարիներին, անդառնալի կորուստներ կրեց հոգևոր ու գեղարվեստական բացառիկ արժեք ներկայացնող հայոց միջնադարյան ճարտարապետությունը: Ղեկավարվելով երիտթուրքական գլխավոր վանդալներից մեկի՝ ներքին գործոց նախարար Թալեաթ փաշայի հրահանգով՝ «ամեն կերպ ջանալ ոչնչացնել բուն «Հայաստան» անվանումը Թուրքիայում», ջարդարարները հողին հավասարեցրին ու ավերակ դարձրին Արևմտահայաստանի և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերի գրեթե բոլոր եկեղեցիներն ու վանքերը (և նրանցում ամփոփված ամեն ինչ): Ընդ որում տարբեր ու բազմաբնույթ աղբյուրներով ճշտվում ու ճշգրտվում է հայկական կրոնական հաստատությունների թիվը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին: Համադրելով այդ տվյալները՝ ի վերջո հեղինակը հանգում է այն եզրակացության, որ 1914-1918 թթ. ընթացքում Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում բռնագրավվել, կողոպտվել և ավերվել են 2050 հայկական եկեղեցի և 203 վանք: Մշակութային եղեռնը, սակայն, չէր վերաբերում լոկ շինությունների ֆիզիկական կործանմանը: Ցեղասպանության ճարակին զոհ դարձան նաև այդ վանքերին ու եկեղեցիներին պատկանող, ինչպես նաև արևմտահայ ընտանիքներում պահվող և սերնդեսերունդ ժառանգաբար փոխանցվող հայոց միջնադարյան ձեռագիր մատյանները, այդ թվում՝ մանրանկարներով զարդարված գրչագրերը: Այդ առումով տեղին է մեջբերված Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս, մեծանուն հայագետ ու արվեստաբան Գարեգին Հովսեփյանի դիպուկ բնորոշումը. «Ոչնչացան հայ ժողովրդի անգնահատելի գանձերը, որ ո՛չ ցեցը և ո՛չ ուտիճը պիտի ոչնչացնէր, բայց ոչնչացրեց մոլեգնեալ էնվերների և Թալեաթների թուրքական կառավարութիւնը՝ Վանտալների և Ատիլանների բարբարոսութիւնից առաւել աստիճաններով: Ոչնչացրել են հազարաւոր ձեռագիրներից բաղկացած ժողովածուները, որոնց մէջ մարմնաւորուած հայ արուեստը, հայ մշակոյթը, հայ միտքը, հայի հոգին» (էջ 11):

Աշխատության հեղինակը հմուտ պատմաբանի նրբին զգացողությամբ ներկայացնում է հայոց մշակութային կորուստները նախ ժամանակագրական հաջորդականությամբ՝ Մեծ եղեռնի նախերգանք հանդիսացած 1895-96 թվականներին, ապա Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում (նաև մինչև մեր օրերը):

Եվ այդ ամենը ներկայացվում է նահանգ առ նահանգ և գավառ առ գավառ: Սա զգալի հստակություն ու պարզություն է մտցնում քննարկվող հիմնահարցում:

Աշխատության էջերից հայ ընթերցողի համար պարզ է դառնում, թե արվեստի, գրի ու գրչության որքան և ինչպիսի թանկ կորուստներ ունեցավ հայ ժողովուրդը թուրք-օսմանյան դաժան ու դժնդակ տիրապետության ներքո: Թուրքական բարբարոսության ճիրաններում ոչնչացվեցին հայկական հարյուրավոր և հազարավոր հին և միջնադարյան ձեռագրեր, պատկերազարդ մատյաններ, հնատիպ եզակի գրքեր, մագաղաթյա կաշեպատ մատյաններ, կիրառական արվեստի բացառիկ գործեր, եկեղեցական թանկագին սպասքներ, անոթներ, սփռոցներ, սրբազան մասունքներ ու առարկաներ:



Հայ ժողովրդի և նրա ստեղծած աննման մշակութային արժեքների հանդեպ օսմանյան իշխանությունների, թուրք և քուրդ խուժանի գործած աննախադեպ հանցանքների՝ բռնությունների, կեղեքումների, հոգեկան և ֆիզիկական նվաստացումների բազմաթիվ փաստեր են վկայակոչված սույն աշխատության մեջ: Այս փաստերն այնքան ցնցող են, սարսռազդու, որ ինքնին վկայում են, թե համաշխարհային պատմության մեջ այդ կարգի մշակութային եղեռն առաջին անգամ էր տեղի ունենում: Նույնիսկ մարդկային գրիչն է երբեմն անզոր դառնում նկարագրելու օսմանյան արյունարբու իշխանությունների և թուրք-քուրդ վայրենաբարո հրոսակների կատարած բարբարոսությունները հայ կերպարվեստի և կիրառական արվեստի մեծ ու փոքր կոթողների հանդեպ:

Բազմաթիվ փաստեր են մեջբերվում, թե ինչպես գազազած ամբոխը, ճանապարհին սրբելով ու ավերելով ամեն ինչ, ներխուժել է հայկական վանքերն ու եկեղեցիները, թալանել ու աղտեղություններով պղծել է սուրբ մասունքները: Կոտորածների թոհուրոհում լիովին կամ մասամբ ոչնչացան եզակի միջնադարյան գրչագրեր, հնագույն ձեռագիր ու տպագիր գրքեր: Ներկայացված իրողությունները ահազանգում են, որ հայոց հինավուրց մշակույթի հանդեպ նման վերաբերմունք կարող էր դրսևորել միայն ու միմիայն գրից ու գրչությունից հեռու՝ անկիրթ ու բարբարոս հանրությունը: Թուրքական այդ բարբարոսությանն ականատես օտարներն անգամ (ինչպես օրինակ՝ արաբ փաստաբան Ֆայեզ էլ Ղոսեյնինը) պատմության առջև բարձրաձայն փաստել են, որ հայկական ձեռագրերի և հնատիպ գրքերից շատերի թերթերը, այդ թվում նաև եզակի մանրանկարներով զարդարված էջերը, թուրք նպարավաճառները հետագայում օգտագործել են որպես մթերքների ու ապրանքների փաթեթավորման անարժեք թուղթ (էջ 26):

Աշխատության հեղինակը փաստերի և տարբեր աղբյուրների համադրությամբ փորձում է որոշակի ճշգրտություն մտցնել 19-րդ դարի վերջի կոտորածների և ցեղասպանության տարիներին ոչնչացված ու անհետ կորած հայկական ձեռագրերի թվաքանակի հարցում: Սակայն դա ստուգապես ճշգրտել անհնար է, քանզի ճշգրիտ վիճակագրություն այդ ոլորտում երբեք էլ չի եղել: Ամենանվազ հաշվարկներով 19-րդ դարի 90-ական թթ. և Մեծ եղեռնի շրջանում ոչնչացված և անհետ կորած հայկական ձեռագրերի թիվը հասնում է տասը հազարի, այլ հաշվարկներով՝ քսան հազարի: Իսկ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի Մայր ցուցակի և ձեռագրագիտության բաժնի վարիչ և գլխավոր ավանդապահ Գ. Տեր-Վարդանյանի քննությամբ համիդյան ջարդերի և Մեծ եղեռնի տարիներին ոչնչացվել և անհետ կորել է երեսուն հազար հայկական ձեռագիր: Այսինքն՝ նույնքան, որքան այսօր առկա է ողջ աշխարհում:

Հեղինակի դիտարկումներով, Հայոց ցեղասպանության տարիներին ձեռագրական առավել մեծ կորուստներ կրեց իր նշանավոր վանքերով և մատենադարաններով հարուստ Վասպուրականը: Լիմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսյանը «Համառօտ նկարագրութիւն Վասպուրականի մէջ եղած մի քանի նշանաւոր վանքերու» ուսումնասիրության մեջ վերոնշյալ ժառանգության մասին հետևյալ դիպուկ բնութագրումն է

տալիս. «Վասպուրականի ինչպէս շէն եղած բոլոր վանքերու մէջ, նոյնպէս բոլոր գիւղերու եկեղեցիներու մէջ չկար եկեղեցի մը, ուր 10, 20, 30 կտոր ձեռագրեր չգտնուէին, նոյն իսկ անհատներու քով իրենց տուններու մէջ դրուած 100-աւոր, շուշփաներու մէջ փաթաթուած իբրեւ նուիրական սրբութիւն կը յարգուէին, կը պահպանուէին» (էջ 34): Հենց այդ թոհուրոհում ծանր հարվածներ ստացավ և ըստ էության կործանվեց նշանավոր Վարազավանքը:

Այդ առումով վկայակոչվում է վենետուցի գրող և գինվորական Ռաֆայել դե Նոգալես Մենդեսը, որը 1915 թ. ապրիլյան մարտերի ժամանակ Վանի հայկական թաղամասերը պաշարած թուրքական պահակազորի և հրետանու հրամանատարն էր: Վերջինս սառնասրտորեն նկարագրել է, թե ինչպէս թուրքերը ոմբակոծեցին հայերի պաշտպանական գլխավոր հենակետերը՝ X դարում կառուցված Սուրբ Պողոս և Սուրբ Պետրոս հարակից եկեղեցիներն ու Վարազավանքը՝ իր արժեքավոր բազմաթիվ ձեռագրեր ու հնատիպ գրքեր ունեցող մատենադարանով: Տեղեկացվում է նաև, որ նույն՝ 1915 թ. Վանա լճի արևելյան կազմում գտնվող Այուր գյուղի Ս. Աստվածածնի վանքից, ի շարս միջնադարյան այլ ձեռագրերի, հափշտակվել և անհետ կորել է X դարի հայ հանճարեղ բանաստեղծ, աստվածաբան, երաժիշտ ու փիլիսոփա Գրիգոր Նարեկացու «մատներով գրած» հանճարեղ ստեղծագործության՝ «Մատյան ողբերգության» չափածո աղոթագրքի մագաղաթյա արծաթապատ բնագիրը: Հայ ձեռագրերի գողգոթայի վերաբերյալ այլ կարևոր փաստեր ու մանրամասնություններ են հաղորդվում:

Նշվում է, որ կողոպուտից ու կործանումից փրկված տասնյակ ու հարյուրավոր ձեռագրեր՝ առավելապես գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող, մանրանկարներով զարդարված և թանկարժեք շքեղ կազմեր ունեցող Ավետարաններ, թուրքերից ոմանք, դրանք վաճառելու նպատակով, տարել են արտերկիր: Արվեստի և գիտության այդ եզակի գանձերն Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ 1920-ական թվականներին, հայտնվել են Կ. Պոլսի, Եգիպտոսի, Եվրոպայի և ԱՄՆ-ի տարբեր քաղաքների շուկաներում և հանվել վաճառքի: Հայոց ձեռագրերի մեծագույն մասը, ինչպէս և այն ստեղծած ժողովուրդը, անցել է եղեռնի դժոխային թոհուրոհի միջոցով: Հրի ու սրի միջով անցած և կործանումից հազիվ փրկված ձեռագիր մատյաններից շատերը մեզ են հասել «խիստ վնասուած, սկզբից և վերջից պակասաւոր, կազմերը պոկուած և աւերի ժամանակ օտար ձեռքերից փչացած»՝ թերարժեք, քայքայված ու խաթարված վիճակում (էջ 56):

Սույն աշխատության էջերից մենք տեղեկանում ենք նաև այն ջանքերի մասին, որոնք գործադրել են Հայ առաքելական եկեղեցու այրերն ու պատասխանատուները, նաև առանձին անհատներ ու գործիչներ հայ կերպարվեստի և կիրառական արվեստի գործերն ու մասունքները փրկելու ուղղությամբ: Այսպէս, 1916 թ. մարտին կաթողիկոս Գևորգ Ե. Սուրենյանցի կարգադրությամբ ստեղծվեց մի հանձնախումբ՝ անհապաղ ազատագրված Մուշ մեկնելու համար: Այդ խմբի առջև դրված հիմնական նպատակն էր. «Մուշի և նրա շրջակայքի ժողովրդեան գաղթի ժամանակ թողուած կամ թաքստոցներում պահուած վանքերի և եկեղեցիների գոյքն ու զարդերը, անօթները,

զգեստները, աներից ու կողոպուտից ազատուած ազգագրական, հնագիտական, արուեստի և այլ մնացորդները արկղների կամ պարկերի մէջ դասատրել և ապահով տեղափոխել Մայր Աթոռ» (էջ 42):

Արժանին է մատուցվում անվանի պատմաբան, արևելագետ ու կովկասագետ Նիկողայոս Մառին, որը եղեռնի տարիներին աներևակայելի ջանքեր գործադրեց Վան քաղաքում և նրա շրջակայքում հնագիտական մեծ արժեքներ կայացնող հարյուրավոր ձեռագրերի փրկության համար: Ստեղծված աղետալի վիճակի մասին մեծանուն ակադեմիկոսը 1915 թ. հոկտեմբերին զեկուցագրերով դիմել է Սանկտ Պետերբուրգ՝ Կայսերական գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովին:

Անվանի գեղանկարիչ Փանոս Թերլեմեզյանի հուշագրությունից բերված հատվածը վկայում է, որ 1915 թ. ամռանը՝ Վանի հայության գաղթի օրերին, Ախավանքում փրկված ձեռագրերը «... սնդուկների մէջ առագաստանավով բերում են Ավանց գյուղի նավահանգիստը և այստեղ հաջողացնում են երեք սնդուկ ուղարկել Էջմիածին, իսկ երկու սնդուկ ձգում են ծովը, որպեսզի թուրքերի ձեռքը չընկնի» (էջ 40):

Աշխատության հեղինակն այս ամենը հիմնավոր ներկայացնելուց հետո եզրահանգում է, որ իր պատմական բնօրրանում հայ ժողովրդի կերտած կերպարվեստի և կիրառական արվեստի գանձերի ոչնչացումը դաժան հարված էր մարդկային ողջ քաղաքակրթությանը, քանզի դրանով իսկ մեծապես տուժեց ու աղքատացավ համաշխարհային կերպարվեստը:

Ահա ընդհանուր գծերով այսպես ներկայացրինք և ընթերցողի ուշադրությունը բևեռեցինք գրախոսվող սույն աշխատության վրա, որում բազմաթիվ և բազում հետաքրքիր և ուսանելի այլ դիտարկումներ ու հարցադրումներ կան:

Աշխատությունը գրված է բարձր մակարդակով, հմուտ մասնագիտական որակներով: Հեղինակի գրելաոճը զուսպ է և տարողունակ, որի շնորհիվ ոչ ստվարածավալ գրքով կարողացել է բավականաչափ շատ և կարևոր տեղեկատվություն փոխանցել ընթերցողին:

Մեր կողմից հետևյալ առաջարկությունը կուզենայինք անել. հարկ է, որ սույն օգտակար ու կարևոր աշխատությունն ավելի ծավալուն դառնա նոր աղբյուրների ներգրավումով, լուսանկարների և այլ նյութերի օգտագործումով, և անպայման թարգմանվի օտարազգի ընթերցողների համար մի շարք եվրոպական լեզուներով:

**Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող,  
հրապարակագիր, լրագրող

**ՄԱՐԳԱՐԻՏԱ ՌՈՒՒՍԿՅԱՆ**, Կոնստանտին Պետրոսյանի աշխարհը, պատասխանատու խմբագիր և առաջաբանի հեղինակ՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, 214 էջ + 42 էջ նկար (նույնը՝ ռուսերեն և անգլերեն)\*:

**Քանայի բաներ** – Կոնստանտին Պետրոսյան, կոմպոզիտոր, «Հայաստան» երգը մենակատարի, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար, Կոնցերտ ծայնի և ջազ-նվագախմբի համար, «Հայկական երաժշտական փառատոն»:



ՀՀ ԳԱԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշումներով ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, երաժշտագետ Մարգարիտա Ռուսկյանի «Կոնստանտին Պետրոսյանի աշխարհը» եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) մենագրությունը<sup>1</sup>:

Աշխատությունը նվիրված է ԱՄՆ-ի Ռոդ Այլենդ նահանգում գործող «Հայկական երաժշտական փառատոն» հայկական մշակութային կազմակերպության ղեկավար, Փրովիդենսի (ԱՄՆ) Սուրբ Սահակ-Մեսրոպ հայկական առաքելական եկեղեցու մշակութային և երաժշտական տնօրեն, Ռոդ Այլենդի հայկական երգչախմբի և Մասսաչուսեթս նահանգի Մեծ Վուստերի հայկական երգչախմբի հիմնադիր և ղեկավար, Բոստոնի հանրահայտ «Երևան» երգչախմբի և նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, Ամերիկայի հայկական թանգարանի (Բոստոն) հոգևոր երաժշտության խորհրդի անդամ և երաժշտական ծրագրերի համակարգող, կոմպոզիտոր, դիրիժոր, դաշնակահար և երաժշտական-հասարակական գործիչ Կոնստանտին Պետ-

\* Ընդունվել է տպագրության 10.05.2019:

<sup>1</sup> Մ.Ռուսկյանի «Կոնստանտին Պետրոսյանի աշխարհը» գրքի մասին տե՛ս **Գոմյան Ն.**, Драматургия творчества Константина Петросяна, “Голос Армении”, 2019, 16 марта. **Սարգսյան Լ.**, «Կոնստանտին Պետրոսյանի աշխարհը». բացահայտելով անվանի կոմպոզիտորի կյանքն ու ստեղծագործությունը, «Հայաստանի Հանրապետություն», 2019, 8 հունիսի, էջ 6:

րոսյանի ստեղծագործական բազմակողմանի գործունեության ուսումնասիրությանը:

Բազմաժանր է Կ. Պետրոսյանի ստեղծագործությունը. նա սիմֆոնիկ, կամերային, գործիքային, վոկալ-սիմֆոնիկ և երգչախմբային բարձրարժեք ստեղծագործությունների (դրանցից շատերը ձայնագրվել են ու հրատարակվել աշխարհի տարբեր երկրներում), կինոերաժշտության և թատերական ներկայացումների համար գրված երաժշտության հեղինակ է: Նա 1986-ին գրել է աշխարհում առաջին ու դեռևս միակ Կոնցերտը ձայնի և ջազ-նվագախմբի համար, որը նվիրել է Խորհրդային Միությունում ջազի լավագույն կատարող Տաթևիկ Հովհաննիսյանին: Կոնցերտի պրեմիերան տեղի ունեցավ նույն թվականին Վիլնյուսում Տաթևիկ Հովհաննիսյանի և Վիլնյուսի կոնսերվատորիայի բիգ-բենդի կատարմամբ՝ հայտնի ջազային երաժիշտ, դիրիժոր, տարբեր ժանրերի ստեղծագործությունների հեղինակ, սաքսոֆոնահար և կլանետահար Վլադիմիր Չեկասինի ղեկավարությամբ, և «Мелодия» ֆիրման թողարկեց Կոնցերտի ձայնասկավառակը: Կոնցերտը մեծ հաջողություն ունեցավ Վիլնյուսում, Կաունասում, Ռիգայում և Թբիլիսիում, հաջողությամբ հնչեց 1986թ. ապրիլի 1-5-ը Մոսկվայում կայացած կոմպոզիտորների համամիութենական համագումարում, 1987-ին հասավ Կուբա, հնչեց Հավանայում: 1988-ին Կոնցերտի նոտաները Մոսկվայում հրատարակեց «Советский композитор» հրատարակչությունը, իսկ քսան տարի անց՝ 2008-ին, այն վերաձայնագրվեց ձայնասկավառակի վրա հեռավոր ԱՄՆ-ում:

Կ. Պետրոսյանի գործունեության բոլոր ոլորտները սերտորեն միահյուսված են, ու դրանք դժվար է իրարից բաժանել: Բազմաժանր կոմպոզիտորը միաժամանակ շնորհալի դաշնակահար է, փայլուն դիրիժոր, անխոնջ երաժշտական-հասարակական գործիչ և հմուտ մանկավարժ:

Կ. Պետրոսյանն ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը (էդուարդ Բաղդասարյանի դասարանը) և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան (Գրիգոր Եղիազարյանի դասարանը):

Իր համերգային գործունեությունը սկսել է 19 տարեկանում: 1965-1970 թթ. նա Երևանի «Մոսկվա» կինոթատրոնի նվագախմբի ղեկավարն էր, իսկ 1976-1980 թթ.՝ Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի դիրիժորը: Կատարողական համերգային գործունեությանը զուգընթաց զբաղվել է մանկավարժությամբ. 1976-1985 թթ. դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում:

Վաղ է դրսևորվել Կ. Պետրոսյանի կազմակերպական ձիրքը: 1973-1976 թթ. նա ՀԽՍՀ կուլտուրայի մինիստրության ժողովրդական ստեղծագործության տան գեղարվեստական ղեկավարն էր ու տնօրենի տեղակալը, իսկ 1985-1990 թթ. ղեկավարել է Հայաստանի կոմպոզիտորների միության

երաժշտական լրատվության և պրոպագանդայի կենտրոնը, որի գլխավոր նպատակն էր հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների պրոպագանդումը:

1990-1993 թվականներին Կ. Պետրոսյանը Հայաստանի Խաղաղության ֆոնդի փոխնախագահն էր (նախագահն էր Էդվարդ Միրզոյանը). նրա ջանքերով կազմակերպվել է արտասահմանյան նյութական աջակցությունը հայ մշակույթի գործիչներին, երիտասարդ երաժիշտներին հատկացվել խաղաղության ֆոնդի կրթաթոշակներ:

20-րդ դարի վերջից Կ. Պետրոսյանն իր երաժշտական գործունեությունը շարունակում է ԱՄՆ-ի Ռոդ Ալենդ նահանգի մայրաքաղաք Փրովիդենսում: Այստեղ նա հիմնել է «Հայկական երաժշտական փառատոն» հայկական մշակութային կազմակերպությունը, որի ղեկավարն է մինչ օրս. իր կազմակերպած բազմաթիվ համերգներով նա ԱՄՆ-ում իրականացրել է ժամանակակից հայ երաժշտության պրոպագանդման գործը: Նա Փրովիդենսի Սուրբ Սահակ-Մեսրոպ հայկական առաքելական եկեղեցու մշակութային և երաժշտական բաժինների տնօրենն է:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով, «Ի գնահատանք հայ մշակույթի, երաժշտության ասպարեզում, ինչպես նաև Ամերիկայի հայ համայնքի ազգային, եկեղեցական կյանքում երկար տարիների նվիրյալ ծառայությունների և վաստակի համար» Կ. Պետրոսյանը պարգևատրվեց Հայ առաքելական եկեղեցու բարձրագույն պարգևով՝ «Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ» շքանշանով, որը Փրովիդենսի Սուրբ Սահակ-Մեսրոպ եկեղեցու 100-ամյակին նվիրված հանդիսավոր համերգի օրը կոմպոզիտորին է հանձնել Հայ առաքելական եկեղեցու Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Իսաթակ արքեպիսկոպոս Պարսամյանը: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով 2013թ. մայիսին Կ. Պետրոսյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

Ու թեև նրա մասին հոդվածներ են տպագրվել հայաստանյան և ամերիկյան տարբեր թերթերում և պարբերականներում (“The New York Times”, «Առավոտ», “Новое время”, “Голос Армении”, “The Armenian Mirror-Spectator”, “KNAR Cultural News”, “Observer”, “The Armenian Reporter Int’l”, “Apaga”, “The Providence Journal” ևն), սակայն մինչ օրս Կ. Պետրոսյանի մասին չկա ամփոփ երաժշտագիտական ուսումնասիրություն: Ահա այդ բացն է լրացնում գրախոսվող աշխատությունը: Տաղանդավոր երաժշտագետ Մարգարիտա Ռուֆսյանի «Կոնստանտին Պետրոսյանի աշխարհը» գիրքն աչքի է ընկնում միասնական և բովանդակալից կառուցվածքով, որով ձեռք է բերում մի ամբողջական ելևէջ թե՛ կառուցվածքի, թե՛ մտքի վերաիմաստավորման առումով: Այն հասու է ընթերցող լայն շրջաններին՝ որպես գլխավոր հիմնադրյուր ներառելով երաժշտական մտածելակերպի այնպիսի վառ սյուներից մեկին, ինչպիսին կոմպոզիտոր Կոնստանտին Պետրոսյանն է:

Գրախոսվող աշխատության խմբագիրն է արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը: Նա է հեղինակել աշխատության առաջաբանը, որն անվանել է «Նախերգանք»: Ա.Ասատրյանը նկատում է. «Կոնստանտին Պետրոսյանի մասին առաջին հետազոտությունը պիտի գրեր հենց ինքը՝ հայ ժամանակակից երաժշտության տարեգիր-երաժշտագետը, ում աչքի առաջ էլ անցել են իր ուսումնասիրության հերոսի ողջ կյանքն ու գործունեությունը: Հեղինակն իր հերոսի կերպարը կերտել է խնամքով, սիրով ու ջերմությամբ, փորձել ընթերցողին ժամանակագրական կարգով բազմակողմանի ներկայացնել կոմպոզիտորի ողջ գործունեությունը: Եվ դա նրան հաջողվել է. երաժշտասեր ընթերցողը կլանված հետևում է Կ.Պետրոսյանի կյանքի ուղուն, նրա առջև հառնում է վերջինիս անցած ստեղծագործական, կատարողական, համերգային և երաժշտական-հասարակական բեղմնավոր ճանապարհը, կատարած նշանակալի աշխատանքը, և յուրաքանչյուր պարագրաֆ նոր վրձնահարվածով առավել լիարժեք ու ամբողջական է դարձնում երաժշտի կերպարը» (էջ 14):

Մ.Ռուխկյանն իր հետազոտությունը կատարեց իր աշխատանքային լեզվով՝ ռուսերենով: Հատկանշական է նաև, որ բնագիրն ունի հարուստ, բովանդակալից և մատչելի լեզու, ինչը գրավիչ է դարձնում ընթերցանությունը: Միևնույն ժամանակ անհրաժեշտություն առաջացավ գիրքը հրատարակել երեք լեզուներով՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն, ինչը միանգամայն տրամաբանական էր, քանի որ Կ.Պետրոսյանին ճանաչում են նաև ռուսալեզու ընթերցողները՝ Խորհրդային Միության երաժշտասերները. ժամանակին կոմպոզիտորի ստեղծագործությունները հնչել են Մոսկվայում և Լենինգրադում, Օդեսայում, Սոչիում և Կիևում՝ բավական ընդգրկուն աշխարհագրությամբ: Իսկ այսօր Կ.Պետրոսյանն իր գործունեությունը ծավալում է անգլախոս միջավայրում:

Տեքստի հայերեն գիտական թարգմանությունն իրականացրեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Լիլիթ Արտեմյանը: Նա է կազմել գրախոսվող աշխատության կարևոր արժանիքներից մեկը՝ կոմպոզիտորի ստեղծագործությունների եռալեզու ցանկերը, որոնք գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

Գրքի կազմը ձևավորել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Մարտին Հարությունյանը: Նա կազմի դարձերեսին զետեղել է Կ. Պետրոսյանի՝ մենակատարի, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված «Հայաստան» երգի նոտաների ձեռագիրը, ինչը շատ խորհրդանշական է: Երգը ստեղծվել է 1984 թվականին Նանսեն Միքայելյանի տեքստով: «Հայաստանի» պրեմիերան կայացել է 1984թ. հունիսի 21-ին կոմպոզիտորի և Ռուսլան Գալստյանի՝ Հայֆիլհար-

մոնիայի մեծ համերգասրահում տեղի ունեցած հեղինակային համերգի ընթացքում, Ռուբեն Մաթևոսյանի ու Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ՝ Մելիք Մավիսակալյանի ղեկավարությամբ: «Հայաստանն» իր հաստատուն տեղը գրավեց Ռուբեն Մաթևոսյանի երգացանկում, իսկ 1985-ին արժանացավ տարվա լավագույն երգի համար Հանրապետական մրցանակին: Երգն այսօր էլ կատարում են հայ երգիչներն ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում:

Հուսով եմ, որ ընթերցողը վաստակաշատ երաժշտագետի հերթական աշխատությունը կընթերցի մեծ հետաքրքրությամբ՝ ընդունելով այն որպես երաժշտագիտական նշանակալից իրադարձություն: Կարծում եմ, որ Մ.Ռուսկյանի ծավալուն և բազմաշերտ հետազոտությունը լայն արձագանք ու տարածում կգտնի ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանում, Եվրոպայում և ԱՄՆ-ում:

#### **Հ.Գ.**

2019 թվականի հունիսի 8-ին Հայաստանի կոմպոզիտորների տան դահլիճում տեղի ունեցավ Մ.Ռուսկյանի «Կոնստանտին Պետրոսյանի աշխարհը» գրքի շնորհանդեսը, որի ընթացքում ելույթ ունեցան ինչպես մենագրության ստեղծագործական խմբի անդամներ Աննա Ասատրյանը, Մարգարիտա Ռուսկյանը և Լիլիթ Արտեմյանը, այնպես էլ Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը, Գերաշնորհ Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը, ՀՀ ԳԱԱ «Հայկական հանրագիտարան» հրատարակչության խմբագիր-տնօրեն Հովհաննես Այվազյանը, ֆուտբոլիստ Սերգեյ Բոնդարենկոն և այլք: Վերջում շնորհակալանքի խոսք ասաց կոմպոզիտորը:

Միջոցառման ընթացքում տեղի ունեցավ Կ.Պետրոսյանի «For Lilit» դաշնամուրային պիեսի պրեմիերան: Պիեսը կատարեց Լիլիթ Արտեմյանը, ում էլ նվիրված է այն:

#### **Հովհաննես ՄԱՆՈՒԿՅԱՆ**

արվեստագիտության թեկնածու,  
 ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի  
 գիտաշխատող,  
 կոմպոզիտոր, երգեհոնահար և դաշնակահար



**ՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ԵՐԱԺՇՏԱԳԵՏԸ. ԿԱՐԻՆԵ ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆ  
(ծննդյան 90-ամյա հոբելյանի կապակցությամբ)\***



2019թ. հուլիսի 7-ին լրանում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի երկարամյա վարիչ, Հայաստանում և այլուր հայտնի, անվանի երաժշտագետ-տեսաբան, հրապարակախոս, քննադատ, գիտության եռանդուն կազմակերպիչ, անխոնջ մշակ, Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության և ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից ավանդական երաժշտության միջազգային խորհրդի անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու Կարինե Խուդաբեկյանի (1929-2015) ծննդյան 90-ամյակը:

Ծնվել է 1929 թվականի հուլիսի 7-ին: Սերում է Երևանի և Լոռու Խուդաբեկյանների և Խանադյանների՝ հնատոհմ ազնվականներից և Նախիջևանի Եդիգարյանների՝ տոհմիկ մտավորականներից: Հայրը՝ Էմանուել Խուդաբեկյանը, ճանաչված ճարտարագետ-շինարար էր, մայրը՝ Ռեգինա Եդիգարյանը՝ շնորհալի դաշնակահարուհի և մանկավարժ:

Խուդաբեկյանը գերազանցությամբ ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի տեսական-կոմպոզիտորական բաժինը և ապա Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) Ն.Ռիմսկի-Կորսակովի անվան կոնսերվատորիայի ասպիրանտուրան: Արդի երաժշտագիտության դասականների՝ Գ.Տիգրանովի, Ք.Կուչնարյանի, Յու.Տյուլինի սանուհին և հետևորդն էր: Նրա ստեղծագործական անհատականության ձևավորմանն էապես նպաստեցին և նշանավոր երաժշտագետ-ֆոլկլորագետներ Ա.Քոչարյանը, Վ.Հոշովսկին, ամուսինը՝ հայտնի պատմաբան-արևելագետ Գ.Սարգրսյանը:

Խուդաբեկյանի գիտահետազոտական բազմաբեղուն գործունեության հիմնական ոլորտը հայ երաժշտությունն էր՝ ավանդական (ժողովրդական, աշուղական) և կոմպոզիտորական (դասական, ժամանակակից): Երաժշտագետի գիտական հետաքրքրությունները բազում և բազմապիսի էին, սակայն նախապատվությունը տրվում էր տեսական երաժշտագիտությանը: Խուդաբեկյանի գրչին է պատկանում «Հայ երաժշտությունը մոնոդիայից դեպի բազմաձայնություն» («Армянская музыка на пути от монодии к многоголо-

\* Ընդունվել է տպագրության 18.04.2019:

сию», Երևան, 1977) խորագրով հիմնարար մենագրությունը: Դա առաջին երաժշտատեսական հետազոտությունն է՝ նվիրված հայ կոմպոզիտորական դպրոցի վաղ, ազգային կոմպոզիտորական երաժշտության հետագա ընթացքի համար խիստ կարևոր մինչկոմիտասյան շրջանին: Հեղինակն անդրադառնում է Կոմիտասի անմիջական նախորդների՝ Ք.Կարա-Մուրզայի, Ն.Տիգրանյանի ու Մ.Եկմալյանի կյանքին և գործունեությանը, նրանց կողմից իրականացված հայ ժողովրդական (գեղջկական, քաղաքային), ժողովրդամասնագիտացված (գուսանաաշուղական) և մասնագիտացված (հոգևոր և աշխարհիկ) մոնոդիաների բազմաձայն մշակումների առանձնահատկությունների բացահայտմանը և վերլուծությանը: Մենագրության մեջ առաջին անգամ նշված կոմպոզիտորների ստեղծագործությունը դիտարկվում է XIX դարի վերջի և XX դարի սկզբի եվրոպական և ռուսական երաժշտության ավանդույթների և զարգացման միտումների հունով: Այս ժամանակաշրջանն, ինչպես հայտնի է, նշանավորվեց ազգային կոմպոզիտորական դպրոցների ձևավորմամբ և այնպիսի երկերի ստեղծմամբ, որոնցում համաեվրոպական մասնագիտացված (կոմպոզիտորական) երաժշտության նվաճումները համադրվում են ազգային երաժշտական արվեստի արտահայտչամիջոցների ամենալայն շրջանակի հետ: Հետազոտության մեջ ընտրված տեսանկյունը հնարավորություն ընձեռեց հեղինակին բացահայտելու և իմաստավորելու Կարա-Մուրզայի, Տիգրանյանի և Եկմալյանի երկերում առկա մի շարք, եվրոպական դասական հարմոնիայի տեսանկյունից, անսովոր երևույթներ: Բազմաձայնության վերլուծությունն այս կոմպոզիտորների երկերում հեղինակին հանգեցրեց այն եզրակացությանը, որ համահնչյունների (ակորդների) ընտրությունը, դրանց հաջորդականությունը, տոնայնական պլանների փոփոխումը և հարմոնիկ լեզվի մյուս մանրամասները մեծ մասամբ պայմանավորված են հայկական մոնոդիաների ձայնակարգային (լադային) ինքնատիպությամբ: Այլ կերպ ասած՝ հայ կոմպոզիտորական դպրոցի արդեն իսկ վաղ փուլում «հարմոնիան հասունանում էր ազգային մոնոդիայի հիմքով» (Յու.Տյուլին): Նշված օրինաչափությունն արտահայտվեց (ամեն անգամ՝ յուրովի) բոլոր հայ մեծ կոմպոզիտորների երկերում: Մենագրությունը ժամանակին բարձր գնահատվեց որպես կարևոր ներդրում խորհրդային երաժշտագիտության մեջ:

Երկար տարիներ Խուդաբաշյանը զբաղվել է երաժշտության կարևորագույն, հիմնական բնութագրություններից մեկի՝ ձայնակարգի (լադի) հարցերով: Այսպես, «Կվարտ-կվինտային կառույցները և անգեմիտոնիկան հայ ժողովրդական երգերում» աշխատության մեջ (Երևան, 1977) Խուդաբաշյանը, շարունակելով և զարգացնելով Կոմիտասի, Սպ.Մելիքյանի, Ք.Կուշնարյանի արտահայտած գաղափարները, առաջնորդվելով ֆուլկլորից քաղված բազմաթիվ օրինակներով, հիմնավորում է վերոհիշյալ ձայնակարգերի բնորոշ առանձնահատկությունը հայկական ժողովրդական երգերի համար: Միաժամանակ հեղինակը դրանք համարում է Կոմիտասի երկերում կվարտ-կվինտային և ոչ տերցիային կառուցվածքի այլ համահնչյունների գոյացման նախապայմանը:

Այնուհետև «Հայ մոնոդիկ երաժշտության լադային հնչյունաշարերը և

հնչյունաշարերի անտիկ համակարգը» աշխատության մեջ (Երևան, 1984) ձայնակարգային «թեման» զարգանում է համեմատական երաժշտագիտության հունով: Հիմնվելով անտիկ տեսաբանների կողմից մշակված ձայնակարգային հնչյունաշարերի կառուցվածքային սկզբունքների վրա, նկատի ունենալով կոմիտասյան փորձն այս ոլորտում, վերլուծելով ժողովրդական, ժողովրդամասնագիտացված և մասնագիտացված բազմաթիվ մոնոդիաներ՝ Խուդաբաշյանն առաջարկում է «Երկօկտավային ձայնակարգային հնչյունաշարի լրիվ կատարյալ մոդուլյացիոն համակարգի» իր տարբերակը: Այն, ըստ գիտնականի, ընկած է հայ մոնոդիկ երաժշտության հիմքում և մի շարք եզրերով առնչվում է ձայնակարգային հնչյունաշարերի անտիկ համակարգի հետ: Վերջինս, ըստ հեղինակի, չի նշանակում, որ անտիկ ձայնակարգերն ազդել են հայ մոնոդիկ երաժշտության ձայնակարգերի վրա, այլ հետևանք է այն բանի, որ անտիկ գիտնականների ստեղծած մոնոդիկ երաժշտության կատարյալ տեսությունն արտացոլում է Հին Հունաստանի հետ մշտապես առնչվող մի շարք ժողովուրդների մոնոդիկ երաժշտության առանձնահատկությունները:

Ձայնակարգի ուսումնասիրության մեթոդաբանության մեջ արժեքավոր ներդրում է Խուդաբաշյանի «Մոդուլների համակարգը և դրանց կիրառումը ժողովրդական երգի ձայնակարգի նկարագրության ընթացքում» աշխատությունը (գրված է 1978 թ., հրատարակվել է 1996 թ.): Այստեղ, Հայաստանում 1927 թվականից հրատարակված բոլոր ժողովրդական երգերի (շուրջ 1000 նմուշ) ձայնակարգային վերլուծության հիման վրա, մանրամասն մշակվել և համակարգվել են հեղինակի ձայնակարգային կոնցեպցիան, «ձայնակարգ», «ձայնակարգային հնչյունաշար», «ինտոնացիա» և այլ հասկացությունների սահմանումից մինչև ձայնակարգի քանակային և թվային ցուցիչները: Միաժամանակ աշխատության մեջ ներկայացված է հեղինակի մշակած մոդուլների՝ պայմանական նշանների թվագրական համակարգը, որի միջոցով նկարագրվում է երգի ձայնակարգը:

Խուդաբաշյանի հետազոտություններում կարևոր տեղ ունի հայ ժողովրդական երգերի երաժշտաբանաստեղծական տեքստերի վանկաչափական կառուցվածքը («Ամանակ, վանկաչափություն», Երևան, 1995 թ., «Հայ ավանդական երգի տաղաչափական համակարգի շուրջ», Երևան, 1997 թ.): Հարկ է նշել, որ հայ երաժշտական ֆոլկլորագիտության այս ոլորտը, որը ժամանակին հիմնադրեց Կոմիտասն իր «Հայ գեղջկական երաժշտություն» հիմնարար աշխատության մեջ (1906 թ.), հետագայում համարյա չի շոշափվել հայ երաժշտագետ-տեսաբանների կողմից:

Խուդաբաշյանի աշխատություններն այս ասպարեզում խթանեցին հայ երաժշտագետների հետազոտական հետաքրքրությունը նույն ուղղությամբ, որ հատուկ նշանակություն ունի, մասնավորապես հայ ժողովրդական երաժշտության դեռևս քիչ լուսաբանված, բայց և խիստ կարևոր երևույթների՝ երգային տիպերի և երաժշտական բարբառների ուսումնասիրության տեսանկյունից:

Խուդաբաշյանն անդրադարձել է նաև Արևելքի մասնագիտացված երաժշտության կոթողներից մեկին՝ մուղամին, դիտարկելով վերջինիս՝ Հա-

յաստանում տարածված նմուշները: Հեղինակը նշում է այդ մուղամների կարճաբանությունը (լակոնիզմը), կանոնավոր և կուռ կառուցվածքը որպես տվյալ ժանրի՝ հայերի շրջանում կատարողական մեկնության յուրահատկություններ:

Նշված և այլ աշխատությունները ժամանակին լույս են տեսել գիտական տարբեր ժողովածուներում և պարբերականներում, ավելի ուշ ամփոփվել են հեղինակի «Հայ երաժշտությունը համեմատական երաժշտագիտության տեսանկյունից» խորագրով սովորածավալ գրքում («Армянская музыка в аспекте сравнительного музыкознания», Երևան, 2011), որը վերջին տարիների հայ երաժշտագիտական մտքի առավել նշանակալից երևույթներից է:

Կյանքի վերջին տարիներին Խուդաբաշյանը հրատարակության նախապատրաստեց, սակայն, ավանդ, չտեսավ իր «կարապի երգը»՝ «Երաժշտության և երաժիշտների մասին» խորագրով սովորածավալ ևս մեկ աշխատություն (350 էջ): Վերջինս բովանդակում է հեղինակի՝ նախկինում չհրատարակված կամ հրատարակության ընթացքում կրճատված, աղավաղված բազմաբնույթ հոդվածների վերախմբագրված, ճշտված և ամբողջացված տարբերակներ:

Խուդաբաշյանի բազմաբովանդակ ստեղծագործական գործունեության մյուս ոլորտը երաժշտական հրապարակախոսությունն էր, որն իր ժանրային ողջ բազմազանությամբ կարևոր և ուրույն տեղ գրավեց երաժշտագետի կյանքում: Համերգներին, երաժշտական ներկայացումներին նվիրված բազմաթիվ գրախոսականների հեղինակ էր («Սևիլյան սափրիչ», «Վեստ-Սայրյան պատմություն», «Տանհոյզեր», «Կրակե օղակ» և այլն): Խուդաբաշյանի մի շարք հոդվածներում վերստեղծվել և ամբողջացվել են հայ ականավոր երաժշտական գործիչների ստեղծագործական դիմանկարները (Ս.Օգանեզաշվիլի, Ա.Քոչարյան, Հ.Դանիելյան, Զ.Դուրխանյան, Գ.Չեքոտարյան, Ա.Տերտերյան<sup>1</sup>):

Երեխաների գեղագիտական դաստիարակությանը, հայկական ֆիլհարմոնիայի գործունեությանը, ինչպես նաև Հայաստանի երաժշտական կյանքի այլ ոլորտների լուսաբանմանը և վերլուծությանը նվիրված քննադատական հոդվածներն ու գրույցները հրապարակվել են հանրապետական և խորհրդային տարիների համամիութենական մամուլում: Խուդաբաշյանի հրապարակումներն աչքի էին ընկնում հարուստ լրատվությամբ, մտահորիզոնի բացառիկ լայնությամբ, սուր քննադատական շնչով: Դրանք անաչառ էին, դյուրընթեռնելի և բանականության, խորագիտակության և հուզականության ներդաշնակ միասնության օրինակ էին ծառայում:

1984 թվականից ավելի քան քսան տարի Խուդաբաշյանը ղեկավարել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժինը: Այստեղ լավագույնս դրսևորվեցին Խուդաբաշյանի՝ որպես գիտական գործընթացի հմուտ կազմակերպչի տաղանդը, շրջապատը ստեղծագործական եռանդով լիցքավորելու, ազգային երաժշտական մշակույթի զարգացմանն

<sup>1</sup> Հարկ է նշել, որ Խուդաբաշյանն առաջին երաժշտագետն էր, որը հանդես եկավ կոմպոզիտոր Ա. Տերտերյանի ստեղծագործությանը նվիրված ծավալուն վերլուծական հոդվածներով:

առավել նպաստող գիտական ծրագրեր մշակելու նրա կարողությունը: Կայացել են ժողովրդական երաժշտության հավաքագրման նպատակով շուրջ 50 գիտարշավներ Հայաստանի տարբեր շրջաններում և Հայաստանից դուրս: Ձայնագրվել են երկու հազարից ավելի ժողովրդական երգեր և նվագներ: Համակարգվել է (անկետավորվել, քարտավորվել, անձնագրվել) բաժնի գլխավոր օղակում՝ Ա.Քոչարյանի անվան ձայնադարանում ամբարված ժողովրդական երաժշտության հսկայածավալ նյութը (ավելի քան 20 հազար միավոր):

Հայաստանի մշակութային կյանքի վերջին տարիների կարևոր իրադարձություններից էր «Հայ ավանդական երաժշտություն» բազմահատոր մատենաշարի ստեղծումը, որի հիմնադիրը և գլխավոր խմբագիրը Խուդաբաշյանն էր: Մատենաշարում գործի են դրված Ա.Քոչարյանի անվան ձայնադարանի նյութերը, որոնք ընդգրկում են հայ ավանդական երաժշտության բոլոր բնագավառները՝ գեղջկական, քաղաքային, աշուղական երգեր, եկեղեցական երաժշտության ժողովրդական տարբերակներ, մենակատարային և խմբակային նվագարանային նմուշներ և այլն: Այժմ լույս են տեսել մատենաշարի տասներեք հատորները, այդ թվում՝ «Հայ երկրագործի աշխատանքային երգեր» (Երևան, 2009), «Հայ նվագարանային երաժշտություն. պարեղանակներ և նվագներ» (Երևան, 2010), «Վասպուրականի ավանդական երգեր և նվագներ» (Երևան, 2012), «Հայ վիպական երգեր» (Երևան, 2012), «Հայ աշուղական սիրավեպեր» (Երևան, 2014) և այլն: Մատենաշարի 13-րդ հատորը (Արամ Քոչարյանի գիտարշավային նյութերի ընտրանի. ժողովրդական երգեր, Երևան, 2015) բաժնի աշխատակիցները նվիրեցին իրենց պաշտելի «Տիկինի» հիշատակին:

Կարինե Խուդաբաշյանը Հայաստանի առաջատար երաժշտագետներից էր: Նրա խոսքը մեծ կշիռ և հեղինակություն ուներ, սպասվում էր, ընկալվում էր հետաքրքրությամբ, միտք էր շարժում, հաճախ գիտական աշխույժ բանավեճերի առարկա դառնում, առաջ բերում հետևորդներ:

Խուդաբաշյանն իր ողջ գործունեությամբ ծառայեց ազգային երաժշտարվեստին և լավագույնս կատարեց Կոմիտաս վարդապետի հայտնի ասույթ-հանձնարարականը՝ «Հայն ունի՝ իր երաժշտությունը»:

Ասում են՝ անփոխարինելի մարդիկ չեն լինում:

Կարինե Խուդաբաշյանի՝ մտավորականի, գիտնականի, Ազնվագարմ Հայ Տիկնոջ նկատմամբ այս բանաձևը չի գործում...

### **Անահիտ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

արվեստագիտության թեկնածու, դոցենտ,

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի  
ավագ գիտաշխատող

**ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ.  
ԶԱՎԵՆ ԹԱԳԱԿՉՅԱՆ\***



Լրացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Արամ Քոչարյանի անվան ծայնադարանի վարիչ, ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, երաժշտագետ Զավեն Թագակչյանի ծննդյան 75-ամյակը:

Զավեն Պետրոսի Թագակչյանը ծնվել է 1944թ. մայիսի 18-ին Երևան քաղաքում, 1908թ. Ուրֆայում (Եդեսիա-Ուրհա. Թուրքիա) ծնված և 1932 թվականին հայրենադարձված նկարիչ-դիզայներ Պետրոս Տիգրանի Թագակչյանի ընտանիքում:

Ավարտելով Երևանի Սայաթ-Նովայի անվան յոթնամյա երաժշտական դպրոցի լարային բաժինը (ջութակ)՝ 1959 թվականին ընդունվել է Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարան, որի երաժշտության տեսության բաժինն ավարտել է 1963 թվականին և Հայաստանի կուլտուրայի մինիստրության ուղեգրով աշխատել է Վեդու (Արարատի) շրջանային մանկական երաժշտական դպրոցում որպես երաժշտության (ջութակ, երաժշտության տեսական առարկաներ) ուսուցիչ՝ պաշտոնավարելով մինչև 1966 թվականը:

Նույն՝ 1963 թվականին Զ.Թագակչյանն ընդունվել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական-երաժշտագիտական ֆակուլտետի հեռակա բաժինը, որն ավարտել է 1969-ին: Մասնագիտանալով ժողովրդական երաժշտության բնագավառում՝ նա դիպլոմային աշխատանքի թեմա է ընտրել «Ք.Կուչնարյանի 1927-29 թթ. գիտարշավային նյութերը», վերծանել հավաքածուի շուրջ 6 տասնյակ նմուշներ, այդ թվում՝ հոռովելներ, հոգևոր երգերի ժողովրդական կատարումների տարբերակներ և այլն:

Կոնսերվատորիայում ուսումնառությանը զուգընթաց՝ 1966 թվականին երիտասարդ երաժշտագետն իր դիպլոմային աշխատանքի ղեկավար, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Ռոբերտ Աթայանի խորհրդով ու երաշխավորությամբ աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում՝ իր հետագա ողջ գործունեությունը կապելով հարազատ գիտական օջախի հետ: Եվ պատահական չէ, որ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հիմնադրման կեսդարյա հոբելյանի կապակցությամբ 2008-ին նա պարգևատրվեց ՀՀ մշակույթի նախարարության պատվոգրով:

\* Ընդունվել է տպագրության 14.05.2019:

1966-1969թթ. նա աշխատել է որպես ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի լաբորանտ, ապա ուսումը շարունակել ինստիտուտի ասպիրանտուրայում, որն ավարտել է 1972-ին:

1972-1987թթ. Զ.Թագակյանն աշխատել է որպես ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի կրտսեր գիտաշխատող, իսկ 1993-ից՝ ավագ գիտաշխատող:

Զուգահեռաբար՝ շուրջ մեկ տասնամյակ, Զ.Թագակյանը զբաղվել է մանկավարժական գործունեությամբ. 1971-1972թթ. երաժշտական-տեսական առարկաներ է դասավանդել Ղափան քաղաքի երաժշտական ուսումնարանում, իսկ 1972-1981թթ.՝ Երևանի Ա.Բաբաջանյանի անվան երաժշտական-մանկավարժական ուսումնարանում:

1986 թվականից նա Արվեստի ինստիտուտի Արամ Քոչարյանի անվան ձայնադարանի վարիչն է: Իր բազմամյա գործունեության ընթացքում Զ.Թագակյանը զգալի աշխատանք է կատարել Արվեստի ինստիտուտի հարուստ ձայնադարանի նյութերի կարգավորման ու համակարգման գործում:

Երկար տարիներ Զ.Թագակյանը զբաղվել է ժողովրդական աշխատանքային երգերի կարևոր տեսակներից մեկի՝ հոռովելների համակարգման հարցերով, բազմիցս ելույթներ է ունեցել գիտաժողովներում՝ ներկայացնելով և մասնագետների քննարկման առարկա դարձնելով իր մշակած սկզբունքներն ու մոտեցումները: Տասնամյակների գիտական պրպտումների հանրագումարը դարձավ երաժշտագետի «Հայոց երկրագործական աշխատանքային երգերի՝ հոռովելների երաժշտալեզվական առանձնահատկությունները. ձայնակարգային կառույցներ» թեմայով թեկնածուական ատենախոսությունը (գիտական ղեկավար՝ Ալինա Փահլևանյան), որի հրապարակային պաշտպանությունը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդի՝ 2009թ. հոկտեմբերի 8-ի նիստում, և գիտական աստիճանաշնորհման խորհուրդը նրան միաձայն շնորհեց արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Զ.Թագակյանի ատենախոսությունը նվիրված էր հայկական ժողովրդական երգարվեստի հիմնական տեսակներից մեկի՝ հոռովելների երաժշտալեզվական հատկանիշ-ձայնակարգերի ամբողջական պատկերի լուսաբանմանը: Ուսումնասիրությունը հիմնված էր ինչպես մասնագիտական գրականությանը հայտնի նմուշների, այնպես էլ Արվեստի ինստիտուտի ձայնադարանում ամբարված գիտարշավային նյութերի վրա: Աշխատության հիմքը հանդիսացող հոռովելների ձայնակարգերի համակողմանի քննությունը, դասակարգումն ու տիպաբանությունը խարսխված են հայ ֆոլկլորագիտության մեջ հաստատագրված վերլուծական մեթոդաբանության վրա: Ատենախոսության արժանիքներից էր նաև սակավ ուսումնասիրված երաժշտաբարբառային հատկանիշների մեկնությունը: Միաձայնակարգ, երկձայնակարգ ու բազմաձայնակարգ 140 նմուշներից դուրս բերված բազմազանություն ներկայացնող 48 տիպային կառույցներն ու դրանց՝ թվով 80 տարբերակները ներկայացվել էին բացատրություններով ուղեկցվող հարացույցներով: Տոկոսային հարաբերություններ ներկայացնող աղյուսակները տալիս են այս կամ այն տիպի կիրառելիության ճշգրիտ պատկերը:

Զ.Թագակցյանը հեղինակ է գիտական մի շարք հոդվածների, գեկուցումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

Զ.Թագակցյանը տիրապետում է երաժշտագետ-ֆոլկլորագետի մասնագիտության բոլոր՝ հավաքչական, վերծանական-նոտագրական, վերլուծական-ուսումնասիրական, խմբագրական ոլորտներին: «Նա բնությունից օժտված է ֆոլկլորագետին անհրաժեշտ բոլոր տվյալներով,- նկատել է նրա գործընկերը՝ Ալինա Փահլևանյանը,- նուրբ լսողությամբ, զգայուն հոգով, ազնիվ ճաշակով, ժողովրդական արվեստը հասկանալու և ճիշտ գնահատելու կարողությամբ: Նա նաև հարազատորեն երգում-վերարտադրում է ֆոլկլորային նմուշը, մի հատկություն, որ վկայում է ժողովրդական երգարվեստի էության ճշմարիտ զգացողության մասին և չափազանց գնահատելի է ֆոլկլորագետների շրջանում»<sup>1</sup>:

Գնահատանքի է արժանի Զ.Թագակցյանի մանրակրկիտ և բարեխիղճ աշխատանքը Միհրան Թումանյանի ֆոլկլորային ժառանգության չորս հատորները հրատարակության պատրաստելու գործում:

Հայաստանի կառավարության հրավերով 1966 թվականի հոկտեմբերին Երևան ժամանեց Կոմիտասի հինգ սաներից մեկը՝ բանասեր, բանահավաք, ազգագրագետ ու երաժշտագետ, գրախոս ու քննադատ Միհրան Թումանյանը (1890-1973), Կոմիտասի սաներից միակը, ով իր կյանքի վերջին տարիներին ապրեց ու ստեղծագործեց հայրենիքում: Թումանյանն աշխատանքի անցավ ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնում: 40 տարիների ընթացքում նա հավաքել էր արևմտահայ տարբեր օջախների՝ Սեբաստիայի, Ալնի, Շատախի և այլ գավառների երգեր, թվով երկու հազար, որոնք հրատարակության էր նախապատրաստում «Հայրենի երգ ու բան» վերնագրով:

Արվեստի ինստիտուտի ղեկավարությունը հանձնարարում է երիտասարդ երաժշտագետներ Ալինա Փահլևանյանին, Արաքսի Սարյանին և Զավեն Թագակցյանին՝ «նեցուկ լինել 76-ամյա հմուտ երաժշտագետ-բանահավաքին նրա առաքելության մեջ»<sup>2</sup>: Այսպիսով, տարիներ շարունակ Արվեստի ինստիտուտում մասնակցելով անվանի բանահավաքի հարուստ հավաքածուի դասակարգման, նոտագիր տեքստերի հստակեցման, դրանք վերջնագիր տարբերակի բերելու գործին՝ երիտասարդ ֆոլկլորագետը հնարավորություն է ունեցել անմիջականորեն շփվելու ու զրուցելու հարուստ կենսափորձ ու գիտելիքների հսկայական պաշար ունեցող իր սիրելի ուսուցչի՝ Միհրան Թումանյանի հետ, մասնավորապես պարզաբանելու նրա բանահավաքչական գործունեության հետ կապված կարևոր մանրամասներ: 1966-1973թթ. Մ.Թումանյանը հասցրեց հրատարակել իր հարուստ հավաքածուի մի մասը միայն: Արևմտյան Հայաստանի ավանդական երաժշտության և

<sup>1</sup> Զ.Թագակցյանի թեկնածուական ատենախոսության պաշտպանության ժամանակ Ալինա Փահլևանյանի ելույթից, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի արխիվ:

<sup>2</sup> **Թագակցյան Զավեն**, Միհրան Թումանյանի բանահավաքչական գործունեությունը, Հասկաքաղ. Միհրան Թումանյան, Պատկերագիրք և գիտական հոդվածներ, Երևան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատարակչություն, 2018, էջ 151:



բանահյուսության՝ Մ.Թումանյանի գրանցած արժեքավոր հավաքածուն Արվեստի ինստիտուտը հրատարակեց հետմահու: Միհրան Թումանյանի «Հայ երգ ու բան» հավաքածուի և՛ 3-րդ (1986)<sup>3</sup>, և՛ 4-րդ (2005)<sup>4</sup> հատորները կազմեց, ծանոթագրեց ու խմբագրեց Կոմիտասի սանի սան Զ.Թագակցյանը:

Նշելի է Զ.Թագակցյանի ֆոլկլորագիտական գործունեությունը «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարի 2-6-րդ, 8-9-րդ և 11-12-րդ պրակների (2008-2015) կազմման, ծանոթագրման ու խմբագրման գործում<sup>5</sup>:

<sup>3</sup> **Թումանյան Միհրան**, Հայրենի երգ ու բան, հ. 3 (կազմ.՝ Զ.Թագակցյան, խմբ.՝ Ռ.Ա.Աթայան), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 220 էջ:

<sup>4</sup> **Թումանյան Միհրան**, Հայրենի երգ ու բան, հ. 4 (կազմ.՝ Զ.Թագակցյան, խմբ.՝ Հ.Պիկիցյան), Երևան, «Զանգակ-97», 2005, 432 էջ:

<sup>5</sup> Հայ ավանդական երաժշտություն: Մատենաշար (խմբ. կազմ.՝ Կ.Խուդաբաշյան (գլխ. խմբ.) և ուրիշներ): Պրակ 2. Հայ նվագարանային երաժշտություն՝ պարեղանակներ և նվագներ (ձայներիզներից վերծանեց և նոտագրեց Աշոտ Մուրադյանը), պրակի խմբագիր՝ Զ.Թագակցյան, Երևան, «Ամրոց գրուպ», 2010, 120 էջ, նոտաներ: Հայ ավանդական երաժշտություն: Մատենաշար: /խմբ. կազմ.՝ Կ.Խուդաբաշյան (գլխ. խմբ.) և ուրիշներ): Պրակ 3. Երգեր և նվագներ (կազմ.՝ Դ.Դերոյան և Զ.Թագակցյան), Երևան, «Ամրոց գրուպ», 2008, 240 էջ, նոտաներ: Հայ ավանդական երաժշտություն: Մատենաշար (խմբ. կազմ.՝ Կ.Խուդաբաշյան (գլխ. խմբ.) և ուրիշներ): Պրակ 4. Հայ երկրագործի աշխատանքային երգեր (կազմ.՝ Զ.Թագակցյան/), Երևան, «Ամրոց գրուպ», 2009, 128 էջ, նոտաներ: Հայ ավանդական երաժշտություն: Մատենաշար (խմբ. կազմ.՝ Կ.Խուդաբաշյան (գլխ. խմբ.) և ուրիշներ): Պրակ 5. Վասպուրականի ավանդական երգեր և նվագներ, հավաքեց, վերծանեց, նոտագրեց և կազմեց Զավեն Թագակցյանը, պրակի խմբագիրներ՝ Զ.Թագակցյան, Հ.Պիկիցյան, Երևան, «Ամրոց գրուպ», 2010, 240 էջ, նոտաներ: Հայ ավանդական երաժշտություն: Մատենաշար (խմբ. կազմ.՝ Կ.Խուդաբաշյան (գլխ. խմբ.) և ուրիշներ): Պրակ 6. Հայ ավանդական պարերգեր, 1953-1970թթ. Սրբուհի Լիսիցյանի գիտարշավի նյութերի հատընտիր, ձայներիզներից վերծանեց և նոտագրեց Դավիթ Դերոյանը, կազմեց Մարգարիտ Սարգսյանը, պրակի խմբագիրներ՝ Զ.Թագակցյան, Հ.Պիկիցյան, Երևան, «Ամրոց գրուպ», 2010, 192 էջ, նոտաներ: Հայ ավանդական երաժշտություն: Մատենաշար (խմբ. կազմ.՝ Կ.Խուդաբաշյան (գլխ. խմբ.) և ուրիշներ): Պրակ 8. Ալաշկերտի ավանդական երգեր, գրառումը Արամ Քոչարյանի, վերծանեց, նոտագրեց և կազմեց Մարգարիտ Սարգսյանը, երաժշտական խմբագիր՝ Զավեն Թագակցյան, բանաստեղծական տեքստի վերծանող և խմբագիր՝ Արուսյակ Սահակյան, Երևան, «Ամրոց գրուպ», 2012, 104 էջ, նոտաներ: Հայ ավանդական երաժշտություն: Մատենաշար (խմբ. կազմ.՝ Կ.Խուդաբաշյան (գլխ. խմբ.) և ուրիշներ): Պրակ 9. Զավախքի պարերգեր և պարեղանակներ (կազմ. Զավեն Թագակցյանը, բանահյուսական տեքստերի վերծանությունները Հռիփսիմե Պիկիցյանի), Երևան, «Ամրոց գրուպ», 2012, 256 էջ, նոտաներ: Հայ ավանդական երաժշտություն: Մատենաշար (խմբ. կազմ.՝ Կ.Խուդաբաշյան (գլխ. խմբ.) և ուրիշներ): Պրակ 11. Վայոց Ձորի ավանդական երգեր և նվագներ, I մաս, Աշխատանքային կենցաղի և Մանկան խնամքին առնչվող երգեր, կազմեցին և խմբագրեցին Զավեն Թագակցյանը և Հռիփսիմե Պիկիցյանը, Երևան, «Ամրոց գրուպ», 2013, 200 էջ, նոտաներ: Հայ ավանդական երաժշտություն: Մատենաշար (խմբ. կազմ.՝ Կ.Խուդաբաշյան (գլխ. խմբ.) և ուրիշներ): Պրակ 12. Վայոց Ձորի ավանդական երգեր և նվագներ, II մաս, Ծիսական շարք, կազմեցին և խմբագրեցին Զավեն Թագակցյանը և Հռիփսիմե Պիկիցյանը, պրակի խմբագիրներ՝ Զ.Թագակցյան, Հ.Պիկիցյան, Երևան, «Ամրոց գրուպ», 2015, 256 էջ, նոտաներ:

Բանահավաքչական ծավալուն գործունեության ընթացքում երաժշտագետ-ֆոլկլորագետը 1967-ին մասնակցել է Ջավախքի՝ ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և Հայաստանի կոմպոզիտորների միության միացյալ գիտարշավին, ինչպես նաև Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի մի շարք գիտարշավների հավաքչական աշխատանքներին՝ ՎԽՍՀ Թբիլիսի քաղաք և Թելավիի շրջան (1984), Թումանյանի շրջան (1991), Վայոց Ձոր (1997-1998), անհատական գիտարշավների ՎԽՍՀ Ախալքալաքի և Բոգդանովկայի (Նինոծմինդա) (1970), Ծալկայի (1971) շրջաններ, ՀԽՍՀ Վարդենիսի և Մարտունու (1976), Ապարանի և Թալինի (1977) շրջաններ, Էջմիածնի շրջանի Մուսալեռ գյուղ (1985):

Նրա ղեկավարությամբ են 1985թ. կայացել ՎԽՍՀ Թբիլիսի քաղաք, Մառնեուլիի, Թեթրի Ծղարոյի և Բուլնիս-Խաչենի, Շահումյան ավանի հայաշատ վայրեր կատարված գիտարշավը, ինչպես նաև 1987թ. մարտ-մայիս ամիսներին Արտաշատի շրջան կատարված 16 գիտարշավները, որոնց ընթացքում իրականացվեցին գյուղական վայրերի երաժշտական կյանքի հետազոտությունն ու ավանդական երաժշտության ծայնագրությունները:

Իր բանահավաքչական գործունեության ընթացքում Զ.Թագակցյանն ամբարել է շուրջ 2500 ժողովրդական երգ ու նվագ, որոնց զգալի մասը վերծանել-նոտագրել ու հրատարակել է ինչպես «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարի պրակներում, այնպես էլ մի շարք հեղինակների գիտական աշխատություններում ու հոդվածներում: Նա հանդես է եկել հայ ավանդական երաժշտարվեստի, այդ թվում՝ գիտարշավների ընթացքում գրառած նորահայտ գիտական-գեղարվեստական հետաքրքրություն ներկայացնող նմուշներ ընդգրկող համերգ-դասախոսություններով, վարել ռադիո և հեռուստատեսային հաղորդում-հարցազրույցներ:

1977 թվականին փաստագրական ֆիլմերի «Երևան» ստուդիան Թալինի շրջանում նկարահանեց Պատմական Հայաստանի Տարոն գավառի երգարվեստին նվիրված «Գորանի» ֆիլմը: Զ.Թագակցյանը ոչ միայն երաժշտագետ Մարգարիտ Ռուխկյանի համահեղինակությամբ գրեց ֆիլմի սցենարը, այլև կարևոր դեր խաղաց իբրև ֆոլկլորային խորհրդատու՝ նկարահանման նյութերն ընտրելիս և մասնակցեց ֆիլմի նկարահանման աշխատանքներին:

Զ.Թագակցյանը զբաղվել է նաև ֆոլկլորագետի պրակտիկ գործունեությամբ: 1981 թվականից համատեղությամբ Գեղագիտության ազգային կենտրոնին կից գործող «Գորանի» մանկական ավանդական երգ ու պարի համույթի գեղարվեստական ղեկավարն է:

1987-1993թթ. ղեկավարել է ՀԽՍՀ հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեի «Հայասա» հայ ավանդական երգ ու պարի համույթը՝ ներկայացնելով հայ տոհմիկ ժողովրդական երգն ու պարը Հայաստանում և արտասահմանյան մի շարք երկրներում:

1983-ին նրան շնորհվել է ԽՍՀՄ լուսավորության մինիստրության պատվոգիր, իսկ 1989-ին՝ Ուկրաինայի Կոմունիստական կուսակցության Ղրիմի մարզային կոմիտեի պատվոգիր:

2016 թվականին «Ազգային մշակութային ժառանգության պահպանման և հանրահռչակման գործում ունեցած նշանակալի ավանդի համար» Զ.Թագակյանը պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով:

Ջերմորեն շնորհավորելով մեր գործընկերոջը հոբելյանի կապակցությամբ մաղթում ենք արևշատություն և գիտաստեղծագործական նորանոր նվաճումներ:

**Աննա ԱՍԱՏՐՅԱՆ**

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

**ԱՐԱ ՀՐԱՉՅԱՅԻ ԴԵՄԻՐԻԱՆՅԱՆ\***



ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը և հայրենական պատմագիտությունը ծանր ու ցավալի կորուստ կրեցին: 2019թ. մայիսի 10-ին վախճանվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտական աշխատակից, պատմական գիտությունների թեկնածու Արա Հրաչյայի Դեմիրիանյանը:

Ա.Դեմիրիանյանը ծնվել է 1945թ. հուլիսի 16-ին Երևանում, ծառայողի ընտանիքում: Հայրը՝ Հրաչյա Դեմիրիանյանը, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր էր, պրոֆեսոր, ատոմային ֆիզիկայի բնագավառի խոշոր մասնագետ, ով այդ բնագավառում ունեցած նշանակալի նվաճումների համար արժանացել

էր Ստալինյան մրցանակի: Մայրը՝ Հասմիկ Վանցյանը, ինժեներ-քիմիկոս էր, ում նախնիները 1839թ. Էրզրումից տեղափոխվել էին Ախալցխա: Մոր պապը՝ ճանաչված լրագրող Ավետիս Ասլանյանը, աշխատակցել էր «Մշակին» և ջերմ ու բարեկամական հարաբերությունների մեջ էր հայ գրականության դասական Րաֆֆու հետ. վերջինիս անձնական ընծայագրով գիրքը մինչ օրս զարդարում է Դեմիրիանյանների ընտանեկան գրադարանը:

1962-ին Ա.Դեմիրիանյանն ավարտել է Թբիլիսիի N 41 միջնակարգ դպրոցը: 1967-ին ընդունվել է Աբխազիայի պետական համալսարանի (քաղաք Սուխում) օտար լեզուների ֆակուլտետը (գերմաներեն լեզու), որն ավարտել է 1972-ին:

Իր աշխատանքային գործունեության սկզբում Ա.Դեմիրիանյանն աշխատել է որպես գերմաներեն լեզվից թարգմանիչ, զուգահեռաբար՝ Աբխազիայի տարածքում մասնակցել հնագիտական տարբեր գիտարշավների և հրատարակել հոդվածներ Աբխազիայի անտիկ հնագիտության վերաբերյալ:

1976-ին Ա.Դեմիրիանյանը տեղափոխվել է Հայաստան և աշխատանքի անցել Հայաստանի ազգագրության պետական թանգարանում (Սարդարապատ)՝ որպես ավագ գիտաշխատող: 1978-1981-ին աշխատել է Հայաստանի պատմության թանգարանում, զբաղվել նախնադարյան արվեստի ուսումնասիրությամբ, հրատարակել գիտական հոդվածներ, զեկուցումներով հանդես եկել համամիութենական կոնֆերանսներում:

1980-ին Ա.Դեմիրիանյանն աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնում՝ որպես գիտաշխատող. վերջին տարիներին նա նույն բաժնի ավագ գիտաշխատող էր:

---

\* Ընդունվել է տպագրության 20.05.2019:

Նրա գիտական հետաքրքրությունների ու մշակումների կենտրոնում էին նախնադարյան արվեստի կոնցեպտուալ հարցերը: Հրատարակել է մի քանի տասնյակ հոդվածներ, այդ թվում՝ հայ և ռուս խոշոր գիտնականների համահեղինակությամբ, արտասահմանում մասնակցել միջազգային գիտա-ժողովների:

Ա.Դեմիրխանյանն առաջ է քաշել նախնադարյան արվեստի ծագում-նաբանության վերաբերյալ գիտական հետաքրքիր հայեցակարգ, որը նրա բոլոր ժանրերը միավորում է մեկ ընդհանուր գաղափարի՝ ընդհանուր արքե-տիպի շուրջ: Ա.Դեմիրխանյանը հանդես է եկել «Երաժշտական մշակույթի վաղ ձևերի ծագումնաբանությունն ու առանձնահատկությունը» գիտական միջազգային կոնֆերանսի գումարման նախաձեռնությամբ: Այդ կոնֆերանս-ը, որը համաշխարհային գիտության մեջ առաջին անգամ էր առաջ քաշում նման հարց, կայացավ Էրմիտաժի այդ ժամանակվա տնօրեն ակադեմիկոս Բ.Բ.Պիոտրովսկու աջակցությամբ և դարձավ սեմիոտիկայի ասպարեզի գիտնականների՝ պալեո-արվեստի պրոբլեմների քննությանը նվիրված առա-ջին կոնգրեսը: Կոնֆերանսը, որը կայացավ 1986-ին Դիլիջանում, լուսաբա-նեց երաժշտական ստեղծագործության առաջացման պրոբլեմը սեմիոտիկա-յի տեսանկյունից և համախմբեց գիտության տարբեր բնագավառների ներ-կայացուցիչների: Կոնֆերանսին նախորդեց հեղինակի առաջարկած գաղա-փարն արվեստի տարբեր ձևերի (երաժշտություն, գրաֆիկա, ճարտարապե-տություն, խորեոգրաֆիա և այլն) կառուցվածքային ընդհանրության վերա-բերյալ: Երաժշտության, ինչպես նաև երաժշտական գործիքների հիմքում, ըստ հեղինակի, ընկած են ընդհանուր արքետիպեր, որոնք էլ ձևավորել են հնագույն պլաստիկ ստեղծագործությունները, մասնավորապես մշակույթնե-րի լայն շրջանակին բնորոշ, այսպես կոչված, «անգլուխ արձանիկները»: Այդ գաղափարական արքետիպերը, որոնք բնորոշում էին հնագույն արվեստի կանոնները, միավորված դիցուք հորիզոնական եռամաս հայելային-սիմետ-րիկ հորինվածքներում, խթանեցին արվեստի առաջացումը որպես բնական ցիկլերի կայունության գեղարվեստական արտացոլում, մարդկանց գոյա-տևման անհրաժեշտություն:

1981 թվականին Ա.Դեմիրխանյանը Երևանի հյուսիս-արևելքում՝ Ավա-նում անցյալում քաջ հայտնի համանուն գյուղի տարածքում, պեղել է մինչ այդ անհայտ, սակայն արժեքավոր հնագիտական հուշարձան: Հայ առաջատար հնագետ, պրոֆեսոր Գ.Տիրացյանի գնահատմամբ դա այդ ժամանակաշրջա-նի հնագիտական ամենանշանակալի հայտնագործությունն էր, որը հնարա-վորություն ընձեռեց «կապել Երևան քաղաքի պատմության միջնադարյան և մինչնախնիկ շրջանները»:

Ավանում իրականացված հնագիտական ուսումնասիրությունների ար-դյունքներն առավել քան զոհացուցիչ էին. վեր հանվեցին զանազան շինու-թյունների մնացորդներ և տվյալ դարաշրջանին բնորոշ հարուստ ուղեկցող նյութ:

Պեղումներից ի հայտ եկած նյութի և տեղանքի մանրամասն ուսումնա-սիրությունները թույլ տվեց արձանագրել Ավանի անտիկ բնակավայրի՝ մ.թ.ա. II դ. - մ.թ. I դ. սկզբներին գոյության իրողությունը:

Երկար տարիների ընթացքում Ա.Դեմիրխանյանի ղեկավարությամբ իրականացված պեղումների ընթացքում ի հայտ եկան հազարավոր առարկաներ, որոնք մի շարք կողմերով բացահայտեցին Արտաշիսյանների դարաշրջանի պատմությունն ու մշակույթը:

Ա.Դեմիրխանյանի նախաձեռնությամբ Երևանի քաղաքապետարանին կից հիմնադրվեց Պատմահնագիտական թանգարանը, որի անփոփոխ տնօրենն էր:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ և Երևանի նախկին քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի ֆինանսական աջակցությամբ 2010 թվականին լույս տեսավ Արա Դեմիրխանյանի «Северо-восток Еревана в эпоху Арташесидов. Фрагменты материальной и духовной культуры по данным античного поселения в Аван-Ариндже» պատկերազարդ ծավալուն աշխատությունը, որում ամփոփված են երկար տարիների ընթացքում Ավան-Առինջում հեղինակի կատարած պեղումների արդյունքները: Գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ Երևան քաղաքի պատմության թանգարանում 2010թ. դեկտեմբերին:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող 007 մասնագիտական խորհրդում Ա.Դեմիրխանյանը տարիներ առաջ հաջողությամբ պաշտպանել է «Северо-восток Еревана в эпоху Арташесидов. Материальная и духовная культура по данным античного поселения в Аван-Ариндже (II в. до н. э. - начало I в. н. э.)» («Երևան քաղաքի հյուսիս-արևելքը Արտաշիսյանների դարաշրջանում. նյութական և հոգևոր մշակույթը ըստ Ավան-Առինջի անտիկ բնակավայրի տվյալների (մ.թ.ա. II դ. – մ.թ. I դ. սկիզբ)») թեկնածուականատենախոսությունը (գիտական ղեկավար՝ պատմագիտության դոկտոր Էդուարդ Դանիելյան), և նրան միաձայն շնորհվել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ա.Դեմիրխանյանը զբաղվել է նաև հասարակական գործունեությամբ: Տարիներ շարունակ նա համագործակցել է Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերության (АОКС) հետ, եղել «Հայաստան-Ռումինիա» ընկերակցության անդամ: Հայ-ռումինական մշակութային կապերի ամրապնդման գործում ներդրումի համար 2007-ին նա պարգևատրվել է Ռումինիայի Հանրապետության «Մշակույթի ասպարեզում վաստակի համար» շքանշանով:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հիմնադրման 50-ամյա հոբելյանի կապակցությամբ Ա.Դեմիրխանյանը 2008-ին պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության պատվոգրով:

Կենսախինդ ու հմայիչ, բարի ու ազնիվ մարդու, գիտության նվիրյալի լուսավոր կերպարը ընդմիջտ կմնա ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նրա գործընկերների, նրան ճանաչողների սրտերում:

**ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ**

## **ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԸ**

2013-ին ընթերցողների սեղանին դրվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի հեղինակած «Ռուսական պոեզիայի գանձարանից» ժողովածուն, որտեղ ներառված էին XIX-XX դարերի ռուսական պոեզիայի վեց տասնյակ հատընտիր նմուշներ ու դրանց հայերեն թարգմանությունները:

Մեր հանդեսի անդրանիկ համարում առաջին անգամ ներկայացնում ենք Ա.Աղասյանի նոր թարգմանություններից մի քանիսը: Այս անգամ արվեստաբան-թարգմանիչն ընտրել է այսպես կոչված «Արծաթե դարի» ռուս անվանի բանաստեղծներ Կոնստանտին Բալմոնտի, Զինաիդա Գիպիուսի, Նիկոլայ Գումիլյովի, Իգոր Սևերյանինի և Աննա Ախմատովայի ստեղծագործությունները:

**КОНСТАНТИН БАЛЬМОНТ (1867–1942)****СНЕЖИНКА**

Светло-пушистая  
Снежинка белая,  
Какая чистая,  
Какая смелая!

Дорогой бурною  
Легко проносится,  
Не в высь лазурную,  
На землю просится.

Лазурь чудесную  
Она покинула,  
Себя в неизвестную  
Страну низринула.

В лучах блистающих  
Скользит, умелая,  
Средь хлопьев тающих  
Сохранно-белая.

Под ветром веющим  
Дрожит, взмечается,  
На нем, лелеющем,  
Светло качается.

Его качелями  
Она утешена,  
С его метелями  
Крутится бешено.

Но вот кончается  
Дорога дальняя,  
Земли касается  
Звезда кристальная.

Лежит пушистая  
Снежинка смелая.  
Какая чистая,  
Какая белая!



## ԿՈՆՍԱՆՏԻՆ ԲԱԼՄՈՆՏ (1867–1942)

### ՁՆԱՓԱԹԻԼ

Պայծառ, փետրաթեթև  
 Ձնափաթիլ ճերմակ,  
 Այնքա՛ն խիզախ ու խև,  
 Մաքուր ու անապակ:

Ճամփով փոթորկալից  
 Անցնում է վարընթաց  
 Եվ բիլ բարձունքներից  
 Դանդաղ իջնում է ցած:

Լքել է նա, մերժել  
 Երկինքը հիասքանչ,  
 Նետվել-գահավիժել  
 Անդունդը անճանաչ:

Ցուքերի մեջ շողշող  
 Դառնում է կաթնագույն,  
 Փաթիլներից հալչող  
 Ջանազանվում իսկույն:

Հյուսիսաշունչ հողմից  
 Դողում է, վերանում,  
 Գորովագուրթ հովի  
 Գրկում է օրորվում:

Քամուց տարութերված՝  
 Մխիթարվում, ապա  
 Բքի հետ մոլեգնած  
 Պտուտանում է նա:

Սակայն սպառվել է արդ  
 Ճամփան հեռագնաց,  
 Բյուրեղն աստեղազարդ  
 Գետնին է տապալված:

Ընկած է փետրաթև  
 Փաթիլը կաթնաթույր,  
 Այնքա՛ն խիզախ ու խև,  
 Ձուլալ ու մաքրածույլ:

1903

**ЗИНАИДА ГИППИУС (1869-1945)****КРИК**

Изнемогаю от усталости,  
Душа изранена, в крови...  
Ужели нет над нами жалости,  
Ужель над нами нет любви?

Мы исполняем волю строгую,  
Как тени – тихо, без следа,  
Неумолимою дорогою  
Идем – неведомо куда.

И ноша жизни, ноша крестная,  
Чем далее, тем тяжелей...  
И ждет кончина неизвестная  
У вечно закрытых дверей.

Без ропота, без удивления  
Мы делаем, что хочет Бог.  
Он создал нас без вдохновения  
И полюбить, создав, не мог.

Мы падаем, толпа бессильная,  
Бессильно веря в чудеса,  
А сверху, как плита могильная,  
Слепые давят небеса.

1896

**ՋԻՆԱԻԴԱ ԳԻՊԻՈՒՍ (1869-1945)****ՃԻՉ**

Հոգնությունից ուժաթափվում եմ,  
Հոգիս հիվանդ է, անկորով...  
Երկնքի տակ, ինչպես պարզվում է,  
Ոչ կարեկցանք կա, ոչ գորով:

Աստծո կամոք խստապահանջ,  
Ստվերների պես՝ անհետ ու լուռ,  
Խավար ճամփով մենք աննահանջ  
Գնում ենք՝ չգիտես, թե ուր:

Մեր կյանքի խաչը, կյանքի բեռը  
Մի կերպ ենք մեր ուսին տանում...  
Եվ առհավետ փակված դռները  
Վերջ ու վախճան են խոստանում:

Մենք անտրտունջ և անհապաղ  
Անում ենք մեր Տիրոջ ուզածը:  
Նա արարեց մեզ, բայց, ավա՛ղ,  
Չհավանեց ինքն իր ստեղծածը:

Ամբոխը մեր անզոր, անկար է,  
Ապավինել ենք հրաշքի,  
Հսկայական տապանաքար է  
Թվում կամարը երկնքի:

1896

**НИКОЛАЙ ГУМИЛЕВ (1886-1921)****У КАМИНА**

Наплывала тень... Догорал камин.  
Руки на груди, он стоял один,

Неподвижный взор устремляя вдаль,  
Горько говоря про свою печаль:

“Я пробрался в глубь неизвестных стран,  
Восемьдесят дней шел мой караван;

Цепи грозных гор, лес, а иногда  
Странные вдали чьи-то города,

И не раз из них в тишине ночной  
В лагерь долетал непонятный вой.

Мы рубили лес, мы копали рвы,  
Вечерами к нам подходили львы.

Но трусливых душ не было меж нас.  
Мы стреляли в них, целясь между глаз.

Древний я отрыл храм из-под песка,  
Именем моим названа река,

И в стране озер пять больших племен  
Слушались меня, чтили мой закон.

Но теперь я слаб, как во власти сна,  
И больна душа, тягостно больна;

Я узнал, узнал, что такое страх,  
Погребенный здесь в четырех стенах;

Даже блеск ружья, даже плеск волны  
Эту цепь порвать ныне не вольны...”

И, тая в глазах злое торжество,  
Женщина в углу слушала его.

1910

**ՆԻԿՈԼԱՅ ԳՈՒՄԻԼՅՈՎ (1886-1921)****ՕՋԱԽԻ ՄՈՏ**

Մարմրող օջախ... Ծավալվող շվաք:  
Նա կանգնած էր լուռ, մտամոհոփ, մենակ,

Հայացքով անշարժ նայելով հեռվին,  
Խոսելով տրտում իր վշտի մասին.

«Երկրներ տեսա անձանոթ, անեղծ,  
Քարավանը իմ ութսուն օր քայլեց:

Անտառներ, լեռներ՝ խիստ ու ահավոր,  
Քաղաքներ օտար, խորթ և անսովոր:

Այնտեղից հաճախ գիշերվա ժամին  
Ոռնաձայն էր խուլ հասնում ճամբարին:

Անտառ էինք հատում, խրամատ բանում,  
Առյուծներն էին մեզ մթով մոտենում:

Վախ չուներ ոչ ոք: Աչքը գազանի  
Գնդակն էր խոցում մեր հրացանի:

Ավազի տակից պեղեցի մի վանք,  
Անանուն մի գետ կոչվեց իմ անվամբ,

Հինգ խոշոր ցեղեր լճաշատ երկրում՝  
Կամքս հարգելով, ինձ էին ենթարկվում:

Բայց դարձել եմ ես թույլ ու անեռանդ,  
Տկար է հոգիս, ախտավոր, հիվանդ:

Չորս պատերի մեջ կենդանի թաղված՝  
Ես զգացի, զգացի վախն անդիմադարձ:

Նույնիսկ զենքը ցուլ, վետր ծփծփան  
Անկարող են արդ պատռել այդ շղթան...»

Եվ հրճվանքը չար աչքերում պահած՝  
Լսում էր նրան կինը լռակյաց:

1910

**ИГОРЬ СЕВЕРЯНИН (1887-1941)**

\* \* \*

Это было у моря, где ажурная пена,  
Где встречается редко городской экипаж...  
Королева играла – в башне замка – Шопена,  
И, внимая Шопену, полюбил ее паж.

Было все очень просто, было все очень мило:  
Королева просила перерезать гранат,  
И дала половину, и пажа истомила,  
И пажа полюбила, вся в мотивах сонат.

А потом отдавалась, отдавалась грозово,  
До восхода рабыней проспала госпожа...  
Это было у моря, где волна бирюзова,  
Где ажурная пена и соната пажа.

1910

**ԻԳՈՐ ՍԵՎԵՐՅԱՆԻՆ (1887-1941)**

\* \* \*

Ծովափին մի դոյակ կար, ուր ալիքը գանգուր էր,  
Հազվադեպ էր անցնում ձիակառքն այստեղով...  
Շոպենով հիացած թագուհին նվագում էր,  
Ու սիրեց նրան պաժը՝ Շոպենից ազդվելով:

Ամեն ինչ բնական էր, ամեն ինչ բարետես էր.  
Կարմիր նուռ կտրեցին թագուհու պահանջով,  
Ու մեկնեց սիրալիր նա պաժին նռան կեսը,  
Ու պաժին հմայեց սոնատի ղողանջով:

Իսկ հետո հանձնվեց, և ճայթեց փոթորիկը,  
Այդ գիշեր տիրուհին աղախին էր, նաժիշտ...  
Ծովափին մի դոյակ կա, ուր կապույտ է ալիքը,  
Ու ջրում փրփրում են սոնատները պաժի:

1910

**АННА АХМАТОВА (1889-1966)****ЛОТОВА ЖЕНА**

*Жена же Лотова оглянулась позади  
его и стала соляным столпом.*

Книга Бытия

И праведник шел за посланником Бога,  
Огромный и светлый, по черной горе.  
Но громко жене говорила тревога:  
Не поздно, ты можешь еще посмотреть  
На красные башни родного Содома,  
На площадь, где пела, на двор, где пряла,  
На окна пустые высокого дома,  
Где милому мужу детей родила.  
Взглянула – и, скованы смертною болью,  
Глаза ее больше смотреть не могли;  
И сделалось тело прозрачною солью,  
И быстрые ноги к земле приросли.

Кто женщину эту оплакивать будет?  
Не меньшей ли мнится она из утрат?  
Лишь сердце мое никогда не забудет  
Отдавшую жизнь за единственный взгляд.

1924



## ԱՆՆԱ ԱԽՄԱՏՈՎԱ (1889-1966)

### ՂՈՎՏԻ ԿԻՆԸ

*Ղովտի կինը ետ նայեց*

*ու դարձաւ աղէ արձան:*

Գիրք Ծննդոց

Աստծո դեսպանի կամքին հնազանդ  
 Սարն էր բարձրանում Ղովտը սրբակյաց,  
 Բայց նրա կնոջ հոգին քարութանդ  
 Ասում էր. «Շրջվի՛ր, որ տեսնես լքված  
 Սողոմը կրկին՝ հրապարակը, շուկան,  
 Քաղաքի կարմիր աշտարակները,  
 Պատուհանները հարազատ այն տան,  
 Որտեղ ծնվել են քո զավակները»:  
 Շրջվեց, և սաստիկ, մահացու մի ցավ  
 Կնոջ աչքերը կուրացրեց իսկույն,  
 Մարմինը նրա աղէ սյուն դարձավ,  
 Գետնին գամվեցին ոտքերը շարժուն:

Չի ողբա ոչ որ կորուստն այդ չնչին,  
 Միայն իմ սրտում կմնա անմար  
 Հիշատակը յուր, ով զոհվեց վերջին՝  
 Կարոտով լեցուն հայացքի համար:

1924

**ԱՐԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ «ԱՐԵՎԱԾԱՂԻԿՆԵՐ» ԿՏԱՎԸ**

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի «Արվեստագիտության» 016 մասնագիտական խորհրդի անդամ, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, Հայաստանի նկարիչների միության անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, նկարիչ

**Արա Հրավարդի Հակոբյանը**

2019թ. մայիսի 30-ին արժանացել է Թեքեյան մշակութային միության Վահան Թեքեյան մրցանակին (կերպարվեստի ոլորտում)՝ «Արևածաղիկներ» (100x110) գեղանկարի համար:

Շնորհավորում ենք մեր գործընկերոջը և մաղթում ստեղծագործական նորանոր նվաճումներ:



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ԱՂԱՍՅԱՆ Արարատ** – Վաղուց պահանջված գիտական հանդես .... 5

**ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ**

**ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**ԱՍԱՏՐՅԱՆ Աննա** – Տիգրան Չուխանյանը «Բազմավէպ» հանդեսի էջերում..... 7

**ԹԱՄԻՐՕՂԼՅԱՆ Աննա** – Վահրամ Բաբայանի “Monada” տրիոյի մեդիտատիվ հատկանիշների արտացոլման հայեցակարգը ..... 15

**ԿՈՍՏԱՆՅԱՆ Արուսյակ** – Արամ Սաթյանի «Լիլիթ» փոփ-օպերան .... 30

**ՍԱՀԱԿՅԱՆ Նարինե** – Պասակալիան Ղազարոս Սարյանի և Էդգար Հովհաննիսյանի երաժշտարվեստում ..... 38

**ՏԻԳՐԱՆՅԱՆ Մարիաննա** – Շումերական էպոսի հետքերը հայկական ժողովրդական ավետիսներում ..... 45

**ԹԱՏԵՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԻՆՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**ՉԹՅԱՆ Անահիտ** – Սմբատ Բյուրատի «Վարդանանքը» եգիպտահայ թատրոնում և կինոյում. Խաչիկ Սանդալյան ..... 77

**ՍԱՐԳՍՅԱՆ Նազենիկ** – «Հռիփսիմյանների վկայաբանության» խորեոգրաֆիկ մեկնաբանությունը ..... 92

**ԿԵՐՊԱՐՎԵՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**ԶԱՔԱՐՅԱՆ Արեգ** – Երաժշտությունը և բնապատկերը որպես զգացականի համատեքստեր Ջորջոնեի և Տիցիանի որոշ ստեղծագործություններում..... 102

**ԺԱԴԵՅԿՈ Ալեքսեյ (ՈՒԿՐԱԻՆԱ)** – Վալերի Գեղամյանի կյանքը և ստեղծագործական ուղին..... 116

**ՄԱԼԵՔԻ Զահրա (ԻՐԱՆ)** – Պարսկական դասական պոեզիայի արտացոլումը Իրանի միջնադարյան նկարչության մեջ ..... 129

**ՄԵԼԻՔՅԱՆ Սաթենիկ** – Ծաղրանկարչական ժանրի առանձնահատկությունների շուրջ ..... 141

**ՔԱՄԱԼՅԱՆ Մարգարիտա** – Կոնստանտին Ալաջալով (1900-1987). կյանքը և ստեղծագործությունը..... 148

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մարտին** – Թբիլիսի-Երևան. ճարտարապետա-

դիզայներական դիտարկումներ .....	157
<b>ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ Դավիթ</b> – 1915 թ. Հայոց ցեղասպանության հետևանքով ճարտարապետական լքված ժառանգության հատուցման խնդիրները .....	164

### ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

<b>ԱՍԱՏՐՅԱՆ Աննա</b> – Հովհաննես Նալբանդյանի հուշերը Պաբլո Սարասատեի մասին .....	188
--	-----

### ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<b>ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Արմեն</b> – <i>Արարատ Աղասյան</i> , Հայ կերպարվեստի և կիրառական արվեստի կորուստներն Օսմանյան կայսրության տարածքում (համիդյան ջարդերից մինչև մեր օրերը) .....	207
<b>ՄԱՆՈՒԿՅԱՆ Հովհաննես</b> – <i>Մարգարիտա Ռուխկյան</i> , Կոնստանտին Պետրոսյանի աշխարհը .....	212

### ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

<b>ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Անահիտ</b> – Հայ նշանավոր երաժշտագետը. Կարինե Խուդաբաշյան (ծննդյան 90-ամյա հոբելյանի կապակցությամբ) .....	217
--	-----

### ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

<b>ԱՍԱՏՐՅԱՆ Աննա</b> – Հայ երաժշտական ֆոլկլորագիտության նվիրյալը. Զավեն Թագակչյան .....	222
---	-----

### ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

ԱՐԱ ՀՐԱԶՅԱՅԻ ԴԵՄԻՐԻՄԱՆՅԱՆ .....	228
---------------------------------	-----

### ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԸ

Ռուս բանաստեղծների ստեղծագործությունները Արարատ Աղասյանի թարգմանությամբ .....	231
Արա Հակոբյանի «Արևածաղիկներ» կտավը .....	242

**СОДЕРЖАНИЕ**

<b>АГАСЯН Арарат</b> – Давно востребованный научный журнал .....	5
--	---

**СТАТЬИ, СООБЩЕНИЯ****МУЗЫКОЗНАНИЕ**

<b>АСАТРЯН Анна</b> – Тигран Чухаджян на страницах журнала “Базма-веп” .....	7
<b>ТАМИРОГЛЯН Анна</b> – Концепция отражения медитативности Трио “Monada” Ваграма Бабаяна .....	15
<b>КОСТАНЯН Арусяк</b> – Поп-опера “Лилит” Арама Сатяна .....	30
<b>СААКЯН Нарине</b> – Пассакалия в творчестве Лазаря Сарьяна и Эдгара Оганесяна.....	38
<b>ТИГРАНЯН Марианна</b> – Следы шумерского эпоса в армянских народных рождественских “Аветисах” (Благовестах) .....	45

**ТЕАТРОВЕДЕНИЕ И КИНОВЕДЕНИЕ**

<b>ЧТЯН Анаит</b> – “Вартаниды” Смбата Бюрата в армянском театре и кино Египта: Хачик Сандалчян .....	77
<b>САРГСЯН Назеник</b> – Хореографическая интерпретация “Мученичества Рипсимэ и сподвижниц” .....	92

**ИСКУССТВОВЕДЕНИЕ**

<b>ЗАКАРЯН Арег</b> – Музыка и пейзаж как контексты чувственного в некоторых работах Джорджоне и Тициана .....	102
<b>ЖАДЕЙКО Алексей</b> (УКРАИНА) – Личность и художественные практики Валерия Гегамяна .....	116
<b>МАЛЕКИ Захра</b> (ИРАН) – Отражение персидской классической поэзии в средневековой живописи Ирана .....	129
<b>МЕЛИКЯН Сатеник</b> – Об особенностях карикатуры .....	141
<b>КАМАЛЯН Маргарита</b> – Константин Аладжалов (1900-1987): жизнь и творчество .....	148

**АРХИТЕКТУРОВЕДЕНИЕ**

<b>АРУТЮНЯН Мартин</b> – Тбилиси-Ереван. архитектурно-дизайнерские исследования .....	157
<b>КЕРТМЕНДЖЯН Давид</b> – Проблемы компенсации наследия, покинутого в результате армянского геноцида 1915 года .....	164

**ПУБЛИКАЦИИ**

- АСАТРЯН Анна** – Воспоминания Иоаннеса Романовича Налбандяна о  
Пабло де Сарасате ..... 188

**РЕЦЕНЗИИ**

- КАРАПЕТЯН Армен** – *Арарат Агасян*, Потери армянского изобразительного и прикладного искусства на территории Османской империи (от гамидовских погромов до наших дней) ..... 207
- МАНУКЯН Ованес** – *Маргарита Рухкян*, Мир Константина Петросяна ..... 212

**НАШИ ЗАСЛУЖЕННЫЕ ДЕЯТЕЛИ**

- БАГДАСАРЯН Анаит** – Известный армянский музыковед: Карине Худабашян (к 90-летию со дня рождения)..... 217

**НАШИ ЮБИЛЯРЫ**

- АСАТРЯН Анна** – Заслуженный музыковед-фольклорист: Завен Тагакчян ..... 222

**СЛОВО ПАМЯТИ**

- АРА ГРАЧИЕВИЧ ДЕМИРХАНЯН ..... 228

**ТВОРЧЕСКИЕ УВЛЕЧЕНИЯ ИСКУССТВОВЕДОВ**

- Стихотворения русских поэтов в переводах Арарата Агасяна ..... 231
- Картина “Подсолнухи” Ара Акопяна..... 242

**CONTENTS**

**AGHASYAN Ararat** – Long awaited scholarly journal ..... 5

**ARTICLES, REPORTS**

**MUSICOLOGY**

**ASATRYAN Anna** – Dikran Tchouhadjian on the pages of “Bazmavep” journal ..... 7

**TAMIROGHLIAN Anna** – The concept of reflection of meditative qualities in Vahram Babayan’s trio “Monada” ..... 15

**KOSTANYAN Arusyak** – Aram Satian’s “Lilit” pop opera ..... 30

**SAHAKYAN Narine** – Passacaglia in the musical work of Lazar Saryan and Edgar Hovhannisyan ..... 38

**TIGRANYAN Marianna** – Traces of anicent sumerian epic poetry in the Armenian avetises ..... 45

**THEATER AND FILM STUDIES**

**CHTIAN Anahit** – The “Vardanank” of Smbat Burat in the Armenian theatre and cinema of Egypt: Khachick Sandaljian ..... 77

**SARGSYAN Nazenik** – The choreographic interpretation of the “Martyrdom of Hripsime and companions” ..... 92

**ART STUDIES**

**ZAKARIAN Areg** – Music and landscape as contexts of the sensuous in selected works by Giorgione and Titian ..... 102

**ZHADEYKO Aleksey (UKRAINE)** – Valeriy Geghamyan’s personality and art practice ..... 116

**MALEKI Zahra (IRAN)** – The reflection of Persian classical poetry in the medieval painting of Iran ..... 129

**MELIKYAN Satenik** – On peculiarities of caricature ..... 141

**KAMALYAN Margarita** – Constantin Alajalov (1900-1987): life and oeuvre ..... 148

**ARCHITECTURAL STUDIES**

**HARUTYUNYAN Martin** – Tbilisi-Yerevan. design and architectural observations ..... 157

<b>KERTMENJIAN David</b> – The demolished tradition of armenian architecture during 1915 genocide and its current reimbursement problems .....	164
--	-----

#### PUBLICATIONS

Hovhannes Nalbandyan’s memoirs about Pablo de Sarasate .....	188
--	-----

#### BOOKS REVIEWS

<b>KARAPETYAN Armen</b> – <i>Ararat Aghasyan</i> , The loss of Armenian fine and applied arts on the territory of the Ottoman Empire (from Hamidian massacres till nowadays) .....	207
<b>MANUKYAN Hovhannes</b> – <i>Margartia Ruhkyan</i> , The world of Konstantin Petrossian .....	212

#### OUR HONOURED SCHOLARS

<b>BAGHDASARYAN Anahit</b> – The renowned Armenian musicologist: Karine Khudabashyan (Towards the 90th Anniversary of Karine Khudabashyan) .....	217
--	-----

#### OUR JUBILEES

<b>ASATRYAN Anna</b> – The devotee of Armenian folk music studies: Zaven Tagakchyan .....	222
---	-----

#### WORD OF MEMORY

Ara H. DEMIRKHANIAN .....	228
---------------------------	-----

#### ART CREATIONS BY CRITICS OF ART

Works by Russian poets translated by Ararat Aghasyan .....	231
Ara Hakobyan’s painting “Sunflowers” .....	242



Հայերեն բաժնի խմբագիր՝ **Ազատուհի ՍԱՀԱԿՅԱՆ**

Ռուսերեն բաժնի խմբագիր՝ արվեստագիտության թեկնածու **Մարգարիտա ՔԱՄԱԼՅԱՆ**

Անգլերեն բաժնի խմբագիր՝ արվեստագիտության թեկնածու **Մարգարիտա ՔԱՄԱԼՅԱՆ**

Редактор армянского отдела – **Азатуи СААКЯН**

Редактор русского отдела – кандидат искусствоведения **Маргарита КАМАЛЯН**

Редактор английского отдела – кандидат искусствоведения **Маргарита КАМАЛЯН**

Editor of Armenian part – **Azatuhi SAHAKYAN**

Editor of Russian part – Candidate of Arts **Margarita KAMALYAN**

Editor of English part – Candidate of Arts **Margarita KAMALYAN**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Վերա ՊԱՊՅԱՆԻ**

Компьютерный дизайн и пагинация – **Веры ПАПЯН**

Computer design and paginatioan – **Vera PARYAN**

Շապկի ձևավորումը՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Մարտին ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ**

Оформление обложки – кандидата искусствоведения **Мартина АРУТЮНЯНА**

Cover design by Candidate of Arts **Martin HARUTYUNYAN**

Խմբագրության հասցեն՝ Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պող. 24/4,  
հեռ. 58-18-51, հեռապատճեն՝ 58-11-09

Адрес редакции: Ереван 0019, пр. Маршала Баграмяна 24/4,

тел. 58-18-51, факс 58-11-09

Address: 24/4 Marshal Baghramian av., Yerevan 0019, Armenia,

tel. 58-18-51, fax 58-11-09

Էլ. փոստ՝ instart@sci.am

Эл. почта: instart@sci.am

E-mail: instart@sci.am

Պաշտոնական կայքէջը՝ [www.arts.sci.am](http://www.arts.sci.am)

Официальный сайт: [www.arts.sci.am](http://www.arts.sci.am)

Website: [www.arts.sci.am](http://www.arts.sci.am)

Հրատ. պատվեր № 957

Ստորագրված է տպագրության՝ 20.06.2019:

Չափսը՝ 70 x 100<sup>1</sup>/<sub>16</sub>, 15,5 տպագր. մամուլ:

Տպաքանակը՝ 200 օրինակ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,  
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24

Подписано к печати 20.06.2019

Формат 70 x 100<sup>1</sup>/<sub>16</sub>, Печ. л. 15,5

Тираж 200 экз.

Типография издательства «Гитутюн» НАН РА,

Ереван, пр. Маршала Баграмяна 24

Signed for printing 20.06.2019 г.

Format 70 x 100<sup>1</sup>/<sub>16</sub>,

Printed copies – 200

NAS RA Press,

Yerevan, Marshal Baghramyan av. 24